

Քաղհասարակությունների հաջորդ հանդիպումը նախատեսված է Ադրբեջանում, սակայն հստակ օր չգիտեմ: Այս հանդիպման նպատակն է, որ փակ թեմաներ չմնան մարդկանց համար: Գերիների, ճանապարհների, ատելությունը վերացնելու հարց, դասագրքերի մասին հարցեր եւ այլն, այսինքն՝ հռետորաբանության հետ կապված հարցեր, անվանումներ:

Կարդացեք՝ էջ 4



Պետք է վերջնականապես ֆիքսել, որ միջազգային կառույցներն ու անցյալի համաշխարհային կարգն այլեւս չկան, մենք մտել ենք վայրի եւ գիշատիչ, առանց կանոնների պատերազմների փուլ: Մյուս կողմից, ԱՄՆ-ում լայն քննարկման թեմա է դարձել այն հարցը, թե որքանով է Ամերիկան ինքնիշխան պետություն ու որքանով՝ Իսրայելի կցորդը:

Կարդացեք՝ էջ 6



Հարցրել են՝ հիմա ո՞րն է ճիշտը, 2 տարի առաջվա ասածդ, թե՞ երեկվա: Պատասխանում է՝ մենք ժամանակին համահունչ ենք քայլում, իսկ դուք ստատիկ վիճակում եք: Չի պատասխանում հարցին, պեչենու բաղերն է ընկնում, դեռ հավելյալ էլ վիրավորում, որ 135 տարի մնացել եմ 3-րդ դասարանում ու շարունակում եմ զենքի վրա երդվել:

Կարդացեք՝ էջ 8

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am
ISSN 1829-2372
9 771829 237007 26033

# Հրապարակ

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 33 (4168), 6 մարտ, ուրբաթ, 2026

www.hraparak.am



«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի օպերատիվ բաժնի պետ Կարեն Գրիգորյանն օրերս Թոխմախի գերեզմանատան տարածքից փորձել է վերցնել նախապես տեղադրված փաթեթը, սակայն բռնվել է պարեկների կողմից: Ըստ նախնական տեղեկությունների, փաթեթում թմրամիջոց է եղել, ու օպերբաժնի պետը, ըստ երեւույթին, դա պիտի հասցներ ՔԿՀ: Ի դեպ, Կարեն Գրիգորյանի ավտոմեքենան կապարակնքվել է, Քննչական կոմիտեում սպասում են դատարանի որոշմանը, որպեսզի խուզարկություն կատարեն: Կարեն Գրիգորյանը նախկինում աշխատել է «Արմավիր» ՔԿՀ-ում՝ որպես օպերլիազոր, ու, ասում են, այնտեղ էլ է զբաղվել հեռախոսների ու թմրամիջոցների վաճառքով: Ամիսներ առաջ Գրիգորյանի նկատմամբ ծառայողական քննություն էր իրականացվել՝ «Նուբարաշենի» հսկիչներից մեկին ծեծելու համար: Ըստ մեր աղբյուրի, ծեծը սկսել է Գրիգորյանի ընկերը՝ օպերլիազոր Արամ Հարությանը, որը շեֆի (օպերբաժնի պետ Կարեն Գրիգորյանի) կամակատարն է: «Նուբարաշեն»-ում բոլոր սկանդալների նախաձեռնողներն այդ երկու օպերներն են եղել: Նկատենք, որ անցած տարվա հոկտեմբերին, Քրեակատարողական ծառայության օրվա առթիվ, Կարեն Գրիգորյանն օրինակելի ծառայության, նվիրվածության եւ մասնագիտական հաջողությունների համար ՔԿԾ պետ Ծովինար Թադեւոսյանի կողմից արժանացել է պարգեւի:




ՔՊ-ականները չնայած վերջին օրերին, բառի բուն իմաստով, պոռոտախոսությամբ են զբաղված եւ հայտարարում են, թե հունիսի 7-ի ընտրություններին սահմանադրական մեծամասնություն են ստանալու, սակայն իրականում մեր իշխանական աղբյուրները չեն թաքցնում, որ, մեղմ ասած, ահաբեկված են իրական սոցհարցումների արդյունքներից եւ որոշ ընդդիմադիրների օրեցօր աճող ռեյտինգից: Փաշինյանի թիմի թիվ մեկ ահնուսարսափը, իհարկե, գործարար Սամվել Կարապետյանի առաջնորդած քաղաքական միավորն է: Պարզվում է՝ Փաշինյանն իր կուսակցության որոշ անդամների հրահանգել է մարզերում «հետախուզական» աշխատանքներ իրականացնել եւ պարզել, թե ինչ սկզբունքով ու մեթոդներով է աշխատում Կարապետյանի թիմը, խոցելի՞ են արդյոք, եւ ինչպե՞ս կարելի է կասեցնել նրանց ընթացքը: Սակայն ուսումնասիրություններից պարզել են, որ կուսակցաշինական աշխատանքների մասշտաբներն այնքան մեծ են, որ անգամ, ՔՊ-ի հաշվարկով, եթե այսպես շարունակվի, ընտրողների մոտ կեսը կարող է ներգրավված լինել Կարապետյանի համակիրների շարքերում:

## Անձի երկվություն

Կարելի է ողջ օրը ժողովրդավարությունից, լեգիտիմությունից, արդար ընտրություններից խոսել, հետո բարձր ամբիոններից հայտարարել, թե այս կամ այն ուժը չի լինելու հաջորդ խորհրդարանում: Եթե ժողովուրդն է իր քվեով որոշելու, թե ով է լինելու խորհրդարանում, ի՞նչ իրավունքով ես նման բան հայտարարում եւ ընտրություններից երեք ամիս առաջ ինչ-որ ուժերի հասցեին հակաքարոզչություն անում: Կարելի է ազատ խոսքից ու ժողովրդավարությունից խոսել եւ խորհրդարանում ի լուր աշխարհի առաջարկել, թե եկեք արգելենք լրագրողներին՝ պաշտոնական տեղեկատվությունից բացի այլ բան հրապարակելը, իսկ պաշտպանության նախարարն էլ հավանություն տա, թե, այո, եկեք նման օրինագիծ ընդունենք: Կարելի է հայտարարել, որ կայուն խաղաղություն է հաստատվել Հայաստանում, որ մեկուկես տարի սահմաններին կրակոց չկա, բանակում ոչ մի զոհ չունենք թշնամու կրակոցից, բայց պարզվի, որ այս ընթացքում թշնամին թաքուն առաջ է եկել մեր տարածքում, նոր դիրքեր գրավել, ամրաշինական աշխատանքներ իրականացրել: Եվ երբ այդ մասին ապացույցներով, քարտեզներով հրապարակեն, հայտարարել, որ դա սուտ է, եւ վերջ: Հույսը միամիտ մարդկանց հավատի վրա է. ով հավատաց՝ հավատաց: Կարելի է մի կողմից խոսել, որ Ռուսաստանի հետ ջերմ հարաբերություններ ունենք, ոչ մի խնդիր չկա, մյուս կողմից հայտարարել՝ «երբ հրաժարվեցինք անվտանգության երաշխավորից, դարձանք պետություն»: Կարելի է հայտարարել, թե ինստիտուցիոնալ պետություն ենք, բոլոր ինստիտուտներն աշխատում են, հետո ասել՝ «կառավարությունը ես եմ»: Ասում են՝ հարեւան երկրում սուգ է, պատերազմ է, սիրուն չէ, որ «պեռաշկի» եք ուտում, թմբուկ զարկում, 2 օր ուշ ցավակցում, ասում է՝ իսկ դուք ինչո՞ւ չեք հացադուլ հայտարարում, մոխիր լցնում ձեր գլխին, քուրձ հագնում:



*Եկեղեցու եւ Վեհափառի դեմ արշավում «թայմաութ» վերցնելու պատճառը, ըստ որոշ տեղեկությունների, Սեւանի եկեղեցու պատարագն է եղել, որին առանց նախապատրաստվելու մասնակցելով՝ Նիկոլ Փաշինյանը հույս է ունեցել, որ իրեն տեսնելով՝ քահանան կվախենա ու կզեղչի կաթողիկոսի անունը: Սակայն, կարելի է ասել, թարս ապտակ է ստացել, քանի որ պատարագ մատուցող քահանան չի շեղվել կանոնական կարգից եւ հնչեցրել է կաթողիկոսի անունը: Փաշինյանն այդ պատարագը, ըստ իր շրջապատի, ծանր է տարել եւ հասկացել, որ իր հակաեկեղեցական գործողությունները դրական ընկալում չեն գտնում հանրության մեջ: Ուստի թիմին ասել է, որ նախընտրական շրջանում պետք է մոռանան այս թեմայի մասին՝ այն նկատառումով, որ եթե ընտրություններում հաղթեն, «Կտրիճ Ներսիսյանը» մնալու շանս չունի՝ ինքնակամ կհեռանա:*

## ՑՈՒՑԱԿԻ ՃՇՏՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

ՔՊ ներկուսակցական ընտրությունների շուրջ «ռազբիրատները» շարունակվում են. բացահայտված զեղծարարներից մեկն էլ առաջին փուլի արդյունքներով 50-րդ համարը զբաղեցրած Հայկ Ավագյանն է՝ 289 ձայնով: Չնայած Ավագյանը, ինչպես նաեւ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը, ՔՊ-ական պատգամավոր Վաղարշակ Հակոբյանը դուրս են մնացել 50-յակից ու փոխարինվել կանանցով, որպեսզի լրացվի կանանց պարտադիր քվոտան, սակայն կուսակցության վարչությունում քննարկվել են Հայկ Ավագյանի ստացած ձայները: Կուսակցությունը դրանք խնդրահարույց է համարել, եւ կարծում են, որ այն ուղղորդված քվեարկության արդյունք է: Հայկ Ավագյանը Վայքի տարածքային կառույցի անդամ է, եւ եթե կասկածները փարատվեն, ապա նա եւս կհետեւի Կարեն Գրիգորյանին եւ դուրս կմղվի ցուցակից: Նախօրեին գրել էինք, որ նախկին պատգամավոր, Վերահսկող հանձնաժողովի նախկին անդամ Կարեն Գրիգորյանին հեռացրել են 50-ից, քանի որ պարզել են, որ նա հեռախոսով ուղղորդել է պատվիրակներին. զանգել, խնդրել է, որ իրեն քվե տան:

# ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ ՉԵՆ ՏԱԼԻՍ, ՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՉՄԱՍՆԱԿՑԵ՞Ն

*Մեզ դիմում են բազմաթիվ արցախցիներ եւ պատմում, որ Արցախից բռնի տեղահանվածների համար Հայաստանի քաղաքացիություն ստանալու գործընթացը կասեցվել է:*



Առանց այն էլ այնքան բարդ էր գործընթացը, որ շատերն ամիսներ էին ծախսում ՀՀ անձնագիր ստանալու վրա: 070 կոդով անձնագրերը Հայաստանն անվավեր ճանաչեց եւ առաջարկեց արցախցիներին՝ նոր անձնագրեր ստանալ, քանի որ հները նրանց տրամադրվել էին ընդամենը որպես «ճամփորդելու համար նախատեսված վկայականներ»: ՀՀ պահանջվող նմուշի անձնագիր չունենալը խոչընդոտում է նաեւ բնակապահովման ծրագրին դիմելուն: Իսկ այժմ էլ արցախցիները կարծում են, որ անձնագիր եւ, ըստ այդմ, ՀՀ քաղաքացիություն չտալու պատճառն ընտրություններն են: Իշխանությունն անում է ամեն հնարավոր բան, որպեսզի արցախցիները չմասնակցեն առաջիկա ընտրություններին: Փաշինյանը վստահ է, որ արցախցիների գերակշռող մասն իրենց քվե չի տալու:

Արցախի պատգամավոր **Մետաքսե Հակոբյանը** «Հրապարակի» հետ զրույցում ասում է, որ փաստաթղթերի վերականգնման խնդիրը կապված է ծննդյան, ամուսնության վկայականների, ծնողների փաստաթղթերի հետ, որոնք մնացել են Արցախում, ինչի արդյունքում արցախցիների համար յուրաքանչյուր փաստաթղթի վերականգնումը շաբաթներ կամ ամիսներ է տեւում, որոշ դեպքերում էլ՝ դատարանի միջոցով է իրականացվում: Նա վստահ է, որ այս ամենն արվում է դիտավորյալ, որպեսզի արցախցիները չմասնակցեն հունիսի 7-ին կայանալիք ընտրություններին եւ իրենց քվեները չտան ընդդիմադիր ուժերին: «Ցավոք, սա նոր բան չէ, սակայն այժմ ավելի պարզ է դառնում, որ նպատակն արցախցիներին ընտրություններին մասնակցելու հնարավորությունից զրկելն է: Ես զբաղվում եմ այս հարցով, սա լուրջ խնդիր է: Անձը, որը հոկտեմբերի 1-ին դիմում է ներկայացրել, ընդամենը օրեր առաջ նոր առաջին նամակ-պատասխանն է ստացել: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ է կատարվում: Այս ամենը պատահական չի արվում: Փաստաթղթերի վերականգնման առումով տարբեր խնդիրներ են առաջանում, մեկի փաստաթղթերը մնացել են Արցախում, մեկինը ռուսական են, մյուսի մոտ ամուսնության վկայականն է բացակայում, եւ այսպես շարունակ: Կան մարդիկ, ովքեր ծննդականից եւս զրկված են, եւ ստացվում է, որ զրկված են նաեւ քաղաքացիությունից: Եթե անձը չունի 60-70 հազար դրամ, որպեսզի մոտենա նոտարական գրասենյակ, գրանցումներ իրականացնի եւ այլն եւ ըստ ընթացակարգի հնարավորություն ունենա քաղաքացիություն ստանալու, հայտնվում է բարդագույն իրավիճակում: Ի դեպ, քաղաքացիություն ստանալու կարգը հունվարի 1-ից դարձրել են օնլայն, ինչը եւս շատ կարեւոր հանգամանք է: Ես հարյուրավոր արցախցիների գիտեմ եւ վստահաբար հայտարարում եմ, որ նրանց թիվը հազարների է հասնում, ովքեր օնլայն գրանցվել չեն կարողանում, քանի որ ապրում են հեռավոր գյուղերում կամ չունեն տեխնիկական միջոցներ: Անգամ ասեմ, որ տեխնիկական միջոցների միջեւ կա տարբերություն, եւ արդյունքում օնլայն գրանցման հարցը բարդանում է: Ես ամեն օր առնվազն մեկ տասնյակ զանգ եմ ստանում՝ այդ խնդրով պայմանավորված: Ասեմ նաեւ, որ կան ոչ պարկեշտ քաղաքացիներ, ովքեր գումարով ծառայություններ են մատուցում եւ արցախցիներին օնլայն գրանցում են քաղաքացիության համար՝ 10 հազար դրամով: Այսինքն՝ ստացվում է, որ եթե մի ընտանիքում ապրում է 7 անձ, այդ ընտանիքը 70 հազար դրամ գումար ուղղակի ջուրն է գցում՝ գրանցում ստանալու համար: Փորձում ենք ծանոթներ գտնել, անձնական միջոցների դիմելով՝ այս հարցերը լուծել, քանի որ պետությունը մի շարք դժվարություններ է ստեղծել մեզ համար, թեպետ անգամ այս դեպքում փաստ չունենք, որ նախքան ընտրությունները քաղաքացիություն կստանանք: Միանշանակ է, որ հատուկ խնդիրներ են ստեղծում, որպեսզի արցախցիները չստանան քաղաքացիություն եւ ընտրություններին հնարավորինս քիչ արցախցիներ մասնակցեն»,- ասում է Մետաքսե Հակոբյանը:

Չնայած արցախցի պատգամավորի պնդումներին՝ ՆԳՆ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության պետ **Նելլի Դավթյանը** «Հրապարակի» հետ զրույցում վստահեցնում է, որ ոչ մի խնդիր չկա, եւ բոլոր արցախցիները պարտադիր ստանում են հայկական անձնագիր: Ավելին՝ Դավթյանը պնդում է, որ եթե կա նման դեպք, որ արցախցուն անձնագիր չեն տրամադրել կամ պրոցեսը դիտավորյալ ձգձգել են, ապա ինքը պատրաստ է ծառայողական քննություն սկսել եւ գործին ընթացք տալ: «Ես խնդրում եմ, որպեսզի այդ արցախցիները դիմեն ինձ, խնդրում եմ ինձ տրամադրել կոնտակտներ, որպեսզի ես հասկանամ, թե ով չի ստացել անձնագիր: Ամեն բան արվում է օրենքով սահմանված ժամկետով: Որեւէ նման խնդիր չկա: Եթե նման բան է եղել, ես ծառայողական քննություն կսկսեմ: Չկա նման բան, երբեք որեւէ արցախցի չի մերժվել, հակառակը՝ մեր ամբողջ ռեսուրսն ուղղել ենք նրան, որ արցախցիները հնարավորինս արագ ստանան անձնագիր: Ասեմ ավելին՝ արցախցիների հարցերը շատ ավելի արագ են փորձում լուծել, քան մյուս քաղաքացիներինը: Մենք այնքան ենք այժմ ծանրաբեռնված, որ մեր խնդիրն այժմ օրենքով սահմանված ժամկետը պահելն է»,- ասում է Դավթյանը:

Հակառակ Մետաքսե Հակոբյանի պնդումներին, թե հունվարի 1-ից քաղաքացիություն ստանալու հայտերի առցանց դիմումները բարդացրել են իրավիճակը, Նելլի Դավթյանը վստահ է, որ դիմում ներկայացնելու պրոցեսը դարձել է առավել դյուրին. «Եթե նախկինում օրական 100 դիմում էինք կարողանում ընդունել, ապա այժմ կարողանում ենք ստանալ 200-250 դիմում՝ մեկ օրվա կտրվածքով: Մաքուր ապատեղեկատվություն եւ սադրիչ հայտարարություն է մեզ նման բանում մեղադրելը, ընտրությունները որեւէ կապ չունեն պրոցեսների հետ, մենք արցախցիներին առավել մեծ ուշադրություն ենք դարձնում, թող մատնանշեն, թե որ անձնագրային բաժնում որ աշխատակիցն է խնդիրներ ստեղծում, ես ծառայողական քննություն եմ սկսելու»: Նրա խոսքով՝ այս տարվա հունվարից մինչեւ փետրվարի 4-ն ընկած ժամանակահատվածում քաղաքացիություն ստանալու ավելի քան 2 հազար 175 դիմում են ստացել, իսկ 2025-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 25 հազար 901 դիմում է եղել, մոտ 8 հազար 850 անչափահաս էլ ստացել է ՀՀ քաղաքացիություն:

**Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ**

# ԻՐԵՆՔ ԿՈՂՄ ԵՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԶՈՒՐՊԱՑԻԱՅԻՆ



Իշխանությունները վերջին շրջանում շարունակ ասում են՝ «Գյումրի 2» չի լինելու: Մոռանալով, թե ինչ է տեղի ունեցել 2023-ի աշնանը Երեւանի ավագանիում, մատի փաթաթան են դարձրել Գյումրու օրինական ընտրությունները: «Մայր Հայաստան» կուսակցության վարչության անդամ, Գյումրու ընտրություններում «Մայր Հայաստանի» երկրորդ համարը զբաղեցնող **Դերենիկ Մալխասյանին** հարցրինք, թե ինչ ասել է «Գյումրի 2 տեղի չի ունենալու», ինչ անօրինական բան է տեղի ունեցել Գյումրիում: Մալխասյանն ասաց. «Իշխանությունը նման քաղաքական եւ քաղաքագիտական հիմարություններ դուրս տալով, ըստ էության, մատնում է իր վախերը: Նրանք շատ են խոսում ժողովրդավարության մասին, ասում են, որ Հայաստանը ժողովրդավարության բաստիոն է, սակայն իրենց ստեղծած արժեքները փաստում են լրիվ հակառակի մասին: Գյումրիում տեղի է ունեցել ընտրություն, որի արդյունքները, իրավական խնդիրները, ազատությունը, անկախությունը, անկաշառությունը որեւիցե մեկի կողմից կասկածի տակ չեն դրվել երբեք, այդ թվում՝ իշխանությունների: Տեղի են ունեցել նորմալ ընտրություններ: Ընտրություններին մասնակցել են տարբեր ուժեր, այդ թվում՝ ընդդիմադիր, իշխանություններն էլ որոշեցին համագործակցել եվրաբաջանաղների հետ, դա էլ իրենց գործն է: Ընտրություններում հավաքական ընդդիմությունը ստացել է 50+ ձայն եւ հաղթել է իշխանություններին: Ժողովրդի կամքով ձեւավորվել է իշխանություն, այսինքն՝ տեղի է ունեցել սահմանադրական ճանապարհով իշխանափոխություն Գյումրիում: Կազմավորվել է իշխանություն, քանի որ հաղթել է ընդդիմությունը: Հիմա եթե իշխանությունը վախենում է «Գյումրի 2»-ից, դա նշանակում է, որ նրանք փաստացի վախենում են սահմանադրական ճանապարհով իշխանափոխությունից: Սա իշխանությունների կողմից առնվազն քաղաքական, քաղաքագիտական տգիտության արդյունք է: Եթե կասկածի տակ են դնում սահմանադրական ճանապարհը, եթե Գյումրու ընտրությունների արդյունքները քննադատում են, դա նշանակում է, որ իրենք կողմ են իշխանության ուզուրպացիային՝ հակասահմանադրական ճանապարհով իշխանության ձեւավորումն է նրանց համար ընդունելի տարբերակ: Սա է իշխանության հասնելու Նիկոլի պատկերացումը: Նրանք այդպես էլ փողոցով իշխանություն զավթելուց առաջ չգնացին: Եթե քննադատում են Գյումրու ընտրությունները, դրանով իսկ խոստովանում են, որ ամեն բան անելու են իշխանությունը պահելու համար՝ դիմելու են տարբեր անօրինական մեթոդների, քանի որ Գյումրիում ամեն բան եղել է օրենքի սահմաններում, իսկ այս մարդկանց դա ձեռնտու չէ, նրանք թքած ունեն ժողովրդի կամքի վրա, քվեի վրա, ցանկության վրա: Ասում են՝ սա եկավ իշխանության՝ լավ մարդ չէ, նա եկավ իշխանության՝ վատն է: Ձեր ի՞նչ գործն է, մեծ հաշվով, եթե ժողովուրդն է որոշողը, ո՞րն է խնդիրը»:

## Աջափնյակի դեպքով 17 անձ է անցնում

Փետրվարի 18-ին, ժամը 16:00-ին Աջափնյակում կրակոցներ են եղել, ինչի հետեւանքով կան մեկ զոհ եւ վիրավորներ: «Արմենիա» ԲԿ էր տեղափոխվել 7 անձ, որոնցից մեկը մահացել է: Վերջինս 45-ամյա երգիչ Արսեն Վարդանյանն է: Ինչ վերաբերում է հրազենային կրակոցներից վիրավորված անձանց, ապա նրանք տարբեր տարիքի են, ամենաերիտասարդը 18 տարեկան է: Տուժած անձինք են. Երեւանի բնակիչներ՝ 39-ամյա Էդգար Ենոքյանը, 18-ամյա Ներսես Սահակյանը, 42-ամյա Հայկ Աբելյանը, Շիրակի մարզի բնակիչ՝ 31-ամյա Ստեփան Մկրտչյանը, Երեւանի բնակիչներ՝ 24-ամյա Արմեն Հակոբյանը, 32-ամյա Դավիթ Զաքարյանը եւ 41-ամյա Գագիկ Սարգսյանը: Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ եւ 8-րդ կետերի (սպանության փորձը), 155-րդ հոդվածի (սպանությունը), 297-րդ հոդվածի 3-րդ մասի (խուլիգանությունը) եւ 335-րդ հոդվածի 1-ին մասի (հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը) հատկանիշներով:

Գրել էինք, որ կոնֆլիկտը սկսվել է Ա. Վարդանյանին սպանած անձի եւ մյուս կողմից մեկ անձի միջեւ՝ աղջկա հետ շփվելու պատճառով: Վեճի առարկան եղել է այն, թե իրենցից ով պետք է շփվի կռվախնձոր դարձած աղջկա հետ, եւ վեճն ավարտվել է զինված հարձակմամբ: Մենք հետաքրքրվեցինք, թե, ի վերջո, այս քրեական գործով քանի անձի նկատմամբ է քրեական հետապնդում հարուցվել, ինչ խափանման միջոցներ են կիրառվել: Գլխավոր դատախազությունից, մեր հարցերին ի պատասխան, տեղեկացրին. «2026 թվականի փետրվարի 18-ին Աջափնյակում տեղի ունեցած դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել 17 անձի նկատմամբ: 2 անձի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանքը, որից մեկով հայտարարված է հետախուզում: 7 անձի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը՝ համակցված այլ խափանման միջոցներով, 5 անձի նկատմամբ ընտրվել է բացակայելու արգելք խափանման միջոցը, 3 անձի վերաբերյալ քննարկվում է խափանման միջոց ընտրելու հարցը»: Ի դեպ, Արսեն Վարդանյանին սպանողը դեռեւս չի հայտնաբերվել:

**Աննա ՊԱՊԻԿՅԱՆ**

## ՔՊ-ականը ստում է

«Հայաստան» խմբակցության պատգամավոր Արման Ղազարյանը մարտի 4-ին կրկին բարձրաձայնեց պաթոլոգիա-անատոմիական լաբորատորիաների խնդիրների մասին: Ղազարյանն ընդգծեց, որ այս խնդիրը, Վարդենիսից բացի, վերաբերում է նաեւ Ճամբարակ համայնքին: Նրա խոսքով՝ քաղաքացիները Ճամբարակից ստիպված են դիակները տեղափոխել Սեւան, ինչն իրենց վրա զգալի ֆինանսական, ֆիզիկական եւ ժամանակային բեռ է դնում: ՔՊ-ական պատգամավոր Նարեկ Գրիգորյանն էլ, անդրադառնալով Գեղարքունիքի մարզում դիահերձարանների խնդրին, ԱԺ ամբիոնից հայտարարեց. «Անցած տարի ընդդիմությունը շահարկում էր Սեւանի դիահերձարանի հարցը, հիմա դրա մասին էլ չի խոսվում, այդ հարցը չի շահարկվում, քանի որ կառավարությունն այդ հարցը լուծել է՝ կառուցեց, վերակառուցեց դիահերձարանը»: Քանի որ Նարեկ Գրիգորյանը մեր զանգերը թողեց անպատասխան, ուզում ենք հրապարակային հարց ուղղել ՔՊ-ական պատգամավորին. վերջին անգամ ե՞րբ է եղել Սեւան քաղաքում, իր աչքով տեսե՞լ է կառավարության կառուցած դիահերձարանը:

Իրոք, Սեւան քաղաքում դիահերձարան կառուցելու նախագիծ կա, սակայն դեռ որեւէ շինարարական աշխատանք չի կատարվել: Սեւանի նախկին հիվանդանոցի տարածքում գործում է հին դիահերձարանը, իսկ նոր դիահերձարան պետք է կառուցվի Սեւանի հոգեկան առողջության կենտրոնի հարեւանությամբ: Գեղարքունիքի մարզի դատաբժշկական փորձագետ **Սահակ Ավետիսյանը** մեզ հետ զրույցում ասաց. «Դիահերձարանը նախագծման, նախահաշվարկային փաստաթղթաշրջանառության փուլում է, դիահերձարանը կառուցված չէ, բայց ընթացքի մեջ է: Նախատեսվում է կառուցել երկհարկանի բազմապրոֆիլ եւ սառնարաններով կահավորված դիահերձարան»:

ՀԱՐՑՈՒՄ

## ԱՅԴ ՊՆԴՈՒՄՆԵՐՆ ԸՆԴԱՄԵՆԸ ԽԻԶԱԽ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ

Վերջին շրջանում Նիկոլ Փաշինյանն ու թիմը ընդդիմության դեմ նաեւ հոգեբանական տեռորի գործիքն են բանեցնում՝ տարբեր ամբիոններից հայտարարում են, որ «Հայաստան» դաշինքը չի լինելու հաջորդ խորհրդարանում: Փաշինյանը նախօրեի հարցուպատասխանի ժամանակ ԱԺ ամբիոնից հայտարարեց դա եւ նկարագրեց հունիսի 7-ի ընտրություններից հետո ձեւավորվելիք խորհրդարանը, թե ԱԺ-ում կլինի 2 ընդդիմադիր ուժ, բայց ո՛չ Քոչարյանի առաջնորդած ուժը: «Չըմի ձեր կեսի չափով տենց մի հատ ուրիշ խմբակցություն ա ըլնելու, մեկ էլ ընդեղ բանով, երրորդ ուժն էլ, ինչպես ասում են՝ բանով, դավեսկայով մի հատ էլ երրորդ ուժ ա ըլնելու, որը դուք չեք ըլնելու»,- հայտարարեց նա: Երեկ՝ կառավարության նիստից հետո կայացած ճեպազրույցում էլ Փաշինյանը կրկնեց նախորդ օրվա պնդումը, ասաց, որ այդ պնդումն արել է՝ հիմնվելով իրենց իրականացրած հարցումների վրա: Ե՞րբ են արվել այդ հարցումները, ո՞ւմ կողմից. չմանրամասնեց՝ շեշտելով, թե դրանք հրապարակման ենթակա չեն, քանի որ արվել են իրենց աշխատանքային նպատակների համար. «Ես տիրապետում եմ հարցումների եւ ինֆորմացիայի եւ առանց դրա չէի կարող նման բան հայտարարել»: Երկրորդ նախագահի գրասենյակը, մինչդեռ, օրերս հակադարձել էր Ալեն Սիմոնյանի նույն պնդումներին, թե երկրորդ նախագահի թիմը հաջորդ խորհրդարան անցնելու խնդիր ունի, հայտնել էին, որ իրենց վերջերս իրականացրած հարցումները հակառակ պատկերն են ցույց տալիս:

Ո՞ւմ սոցհարցումներն են իրական՝ Նիկոլ Փաշինյանի՞, թե՞ Ռոբերտ Քոչարյանի թիմի: Սոցիոլոգ **Արթուր Պարոնյանը** մեզ ասաց, որ ինքն անձամբ այս պահի դրությամբ հարցման արդյունքներ չունի, բայց չի համաձայնի Փաշինյանի եւ նրա թիմակիցների պնդումների հետ: «Անգամ իրենց տպած թվերը (նկատի ունի «Հայաստանի ընտրական համակարգի ուսումնասիրության կենտրոնի» (ArmES) օրերս հրապարակած հարցման արդյունքները՝ Լ. Շ.) ցույց են տալիս, որ իրենց ասածն առնվազն շատ խիզախ հայտարարություններ են, քանի որ Քոչարյանի քաղաքական միավորը դուրս մղվելու միտում չունի»,- ասաց սոցիոլոգը՝ բացատրելով, որ հարցման մեթոդաբանության մեջ կան էական շեղումներ. «ArmES-ի տվյալներով, Քոչարյանն ունի 6.4 տոկոս, այսինքն՝ մոտ 7 տոկոս, արդյո՞ք սա նշանակում է, որ չի անցնելու, դա կարող է լինել տրամադրություն, կարող է լինել, որ ինչ-որ մարդ այդ հարցմանը ճիշտ չի պատասխանել եւ այլն, հետեւաբար, առանց ճշգրիտ թիվ ունենալու նման հայտարարություն անելը կնշանակի, որ իրենք ընդամենը սեփական պրոպագանդան են տանում՝ իրենց հայտնի նպատակով: Գուցե ավելի շատ են վախենում Քոչարյանից, կամ այլ միտում կա, ես չեմ կարող ասել, թե ինչ պատճառով, ինչ նպատակով»:

Սոցիոլոգն ուշադրություն հրավիրեց այն փաստի վրա, որ, ըստ այդ կազմակերպության հարցումների, արդյունքները պատկերվել են 65 տոկոս մասնակցության պարագայում. «65 տոկոսը մոտավորապես «Գյումրի» է լինում, եւ իրենք «ոչ ոքի» անելու հնարավորություն չունեն, Գյումրիում մենք դա տեսել ենք, մինչդեռ իրենց տպած պատկերում «ոչ ոքի» է եկել՝ 40/40: Հարցման մեջ ես կարող եմ 10 անուն դնել ընդդիմությունից, 1 անուն՝ իշխանությունից, ինչն իրենք արել են ու դրա հաշվին ստացել են առավելություն: Այսինքն, նման հնարքներ են կիրառել հարցման մեջ, դրա համար եմ ասում՝ համաձայն չեմ մեթոդաբանության հետ»:



Սոցիոլոգի խոսքով՝ եթե իշխանական քարոզչամեքենան առավոտից երեկո Քոչարյանին բացասական լույսի ներքո է ներկայացնում, որ մեր «ամենամեծ թշնամին Քոչարյանն է», ապա սպասելի է, որ հեռախոսային հարցումների արդյունքն էլ պետք է ցածր գրանցվեր. «Ուստի, հաշվի առնելով նաեւ սոցիոլոգիական շեղումը, որը 2 տոկոս է եւ որը, վստահաբար, ազդելու է Քոչարյանի վրա, իրենց պնդումները, թե «Հայաստան» դաշինքը չի անցնելու հաջորդ խորհրդարան, կրկնում եմ՝ շատ խիզախ են, չհասկանալով, թե ինչ ֆորմատով է Քոչարյանը գնում, ինչպես եւ այլն»:



**Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ**
**lusine.shahverdyan@hraparak.am**

## ԳՈՌԱԼՈՎ ԿԱՄ ԲԵՄԱԿԱՆԱՑՈՒՄՆԵՐՈՎ ԱԿՆՀԱՅՏ ՓԱՍՏԵՐԸ ՉԵՆ ՀԵՐՔՎՈՒՄ

«Միասնության թեւեր» նախաձեռնության ղեկավար Արման Թաթոյանը մարտի 4-ի ասուլիսում հայտարարեց, որ ադրբեջանական զինուժը ՀՀ տարածքում նոր ներխուժումներ է ունեցել, ինչը ՀՀ իշխանությունը թաքցրել է հանրությունից: Նա փաստերով ներկայացրեց՝ ցույց տալով արբանյակային լուսանկարներ Գեղարքունիքի մարզում, մասնավորապես՝ Վարդենիսում թշնամու առաջխաղացումից: «Մինչեւ 2025 թվականի հուլիսի 31-ն այս դիրքը գոյություն չի ունեցել, ըստ արբանյակային լուսանկարների՝ տեսնում ենք, որ դիրքերի տեղադրումն այստեղ տեղի է ունեցել մինչեւ օգոստոսի 19-ի դրությամբ: Տեսնում ենք, որ սա մարտական հերթափոխություն կրող ադրբեջանական դիրք է, այստեղ խոշոր զինատեսակների համար նախատեսված կրակային դիրքեր են, խոսքը մասնավորապես վերաբերում է ռնականետերին, ականանետերին, այստեղ նաեւ հրաձգային հատուկ կետեր են նախատեսված: Բնականաբար, առանձին նախատեսված են նաեւ կոմունիկացիաներ: Այս դիրքերից արդեն Սոթքի հանքավայրն է՝ 4 կմ ուղիղ նշանառությամբ, տեսնում ենք, որ ուղիղ թիրախի տակ է հայտնվել Սոթքի հանքավայրը: Սա էլ արդեն այդ նույն դիրքերից դեպի մեր քաղաքացիական բնակավայրն է, մասնավորապես Կութ գյուղը, որը նրանց ուղիղ նշանառությունն է»,- ասաց Թաթոյանը: Վարդենիսի մեկ այլ դիրքում ադրբեջանցիներն արդեն ճանապարհներ են կառուցել՝ «ռակադային» ճանապարհներ, այսինքն՝ օպերատիվ, ռազմավարական ու մարտավարական նշանակության ճանապարհներ: Եվ այս ամենը տեղի է ունեցել 2025 թվականի հուլիսի 31-ից հետո:

«Հայաստանի սահմանից ընդամենը մի քանի մետր այն կողմ Ադրբեջանը կառուցել է հատուկ թաքստոցներ, մինչեւ նախորդ տարվա օգոստոսի 19-ը ադրբեջանցիները կատարել են շատ խոշոր ամրաշինական աշխատանքներ, հատուկ թաքստոցներ, որոնք կարող են օգտագործվել ռազմական մեքենաների, տանկերի համար: Ենթադրում ենք, որ թաքստոցների այս հատվածները կարող են օգտագործել մեքենաների համար, ականանետերի ու այլ նպատակներով, կարող է նաեւ այս ամենն արել են հարձակողական նպատակներով: Սրանք ուղիղ վերահսկողության տակ են պահում մեր գյուղերը»,- շեշտեց Արման Թաթոյանը:

Դիրքային փոփոխություններ են տեղի ունեցել ոչ միայն Վարդենիսում ու Գեղարքունիքի մարզում, այլեւ Վայոց Ձորում՝ Ջերմուկում, որտեղ ադրբեջանցիները բարելավել են այն դիրքերը, որոնք գրավել էին 2022 թվին, որտեղից կարող են ականանետեր, ռնականետեր օգտագործել: «Այստեղ նրանք կառուցել են ականանետային դասակների համար նախատեսված դիրքեր, սրանք հասարակ ինժեներային ու հատուկ դիրքերի ամրացման աշխատանքներ չեն, սրանք արվել են հատուկ նպատակներով՝ Ջերմուկի հարեւանությամբ, ՀՀ ինքնիշխան տարածքի մեջ»,- ընդգծեց Թաթոյանը:

Թաթոյանի այս հայտարարությունը փոթորկել է ՔՊ-ական իշխանություններին, երեկվանից իշխանությունը, հիմնավոր պարզաբանումներ ներկայացնելու փոխարեն, բղավում է, փողոցային ժարգոնով ռեպլիկներ թողնում Թաթոյանի հասցեին: «Միասնության թեւեր» քաղաքացիական նախաձեռնության համահիմնադիր **Դավիթ Անանյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով Թաթոյանի հայտարարության եւ ՔՊ-ականների վայնասունի մասին, նկատում է. «Ամեն բան շատ պարզ է ու հստակ: Այս պահին մենք որեւէ հստակ քաղաքական ենթատեքստ չենք դնում, այլ ասում ենք իրականությունը: Մեզ հայտնի է դարձել այդ տեղեկությունը, համապատասխան փաստական տվյալները մեզ մոտ են, նկարները վերցրել ենք՝ տեղորոշումներ եւ այլն, եւ ամեն բան բացատրում ենք՝ ինչպես է եղել առաջ, ինչպես է հիմա: Հուլիսի 31-ի դրությամբ ունենք իրավիճակ, իսկ, օրինակ, Վարդենիսի պարագայում՝ օգոստոսի 19-ի դրությամբ մենք հստակ խոսում ենք առաջխաղացումների մասին, ներկայացնում ենք փաստեր, որ Ադրբեջանը մեր սուվերեն տարածքում առաջխաղացում է ունեցել: Իշխանություններն ասում են, որ դա սուտ է, բայց սուտն ու իրականությունը որոշվում են փաստական տվյալներով: Փաստերը կամ հերքվում են, կամ, որպես ապացույց, ներկայացվում են: Ամեն ինչ շատ պարզ է: Իշխանություններն առանց փաստերի, առանց որեւէ հստակեցման ինչ-ինչ հայտարարություններ են անում, սակայն մենք մեզ վեր ենք պահում այդ ամենից: Այդ նեղ անձնական, պրիմիտիվ խոսակցությունների մեջ չենք կարող մտնել: Մենք ներկայացնում ենք փաստեր եւ ակնկալում հստակեցում: Գոռալով կամ բեմականացումներ ներկայացնելով որեւէ հարց չի լուծվելու: Ակնհայտ փաստերն այսպես չեն հերքվում: Մենք, ինչպես նաեւ հանրությունը, լրագրողական համայնքը սպասում ենք իշխանության պարզաբանումների: Մեզ հարկավոր է հողաբաշխ խոսք, մենք գիտենք մեր անելիքները: Իշխանությունը վերցնելու պարագայում մենք անմիջապես քայլեր ենք ձեռնարկելու, սակայն այժմ պահանջում ենք, որ հանրությանը պարզաբանումներ ներկայացնեն: Մենք այժմ զուտ տեղեկություն փոխանցող ենք, փաստեր ենք ներկայացրել, պետք է կամ հաստատվեն, կամ հերքվեն փաստերով: Հասարակությունը պետք է իմանա, թե իր մեջքի ետեւում ինչ է կատարվել՝ լուռումունջ համաձայնություն է եղել թշնամու հետ: Այդ մասին պետք է բոլորն իմանան»:



**Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԻՄԱ ԻՐԵՆՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՏԱՆՈՒՄ

*«Հայկական խորհուրդ» վերլուծական կենտրոնի եւ «Խաղաղության կամուրջ» նախաձեռնության հայաստանյան անդամների նախաձեռնությամբ տեղի է ունեցել հանդիպում:*



Հանդիպումը կայացել է փետրվարի 28-ից մինչեւ մարտի 1-ը, Դիլիջանում՝ մոտ 40 փորձագետների մասնակցությամբ:

Համաժողովի ընթացքում մտքեր են փոխանակվել Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացի, դրա շրջանակում երկու երկրների հանրությունների միջեւ երկխոսության հեռանկարների, առկա մտահոգությունների եւ նոր գաղափարների վերաբերյալ: Նկատենք, որ ֆորումը տեղի է ունեցել գրեթե գաղտագողի, եւ միայն դրա ավարտից հետո է տարածվել տեղեկություն այն մասին, որ նման հավաք է եղել, եւ շատերն անգամ Ֆեյսբուքում միմյանց հարցնում էին՝ ովքեր են մասնակցել, եւ ենթադրում էին, որ հանդիպմանը ներկա են եղել նաեւ Ադրբեջանի քաղհասարակության ներկայացուցիչներ: Մեր զրուցակիցները՝ լրագրող Թաթուլ Հակոբյանն ու ռեժիսոր Ռուբեն Բաբայանը, ովքեր ներկա են եղել ֆորումին, մեզ հետ զրույցում հավաստիացրին, որ հանդիպմանը որեւէ ադրբեջանցի ներկա չի եղել, մասնակցել են բացառապես հայեր:

**Թաթուլ Հակոբյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով քննարկման մասին, նկատում է. «Ես հանդիպմանը ներկա եմ եղել մոտավորապես հինգ րոպե, ընտանեկան դեպք պատահեց, եւ ես ստիպված էի լքել դահլիճը ու վերադառնալ տուն: Ես ոչ մի ելույթ չհասցրի լսել, ոչ էլ՝ հարցուպատասխան: Հասա Դիլիջան ու շտապ վերադարձա տուն: Ես հրավեր էի ստացել Նաիրա Սուլթանյանի կողմից: Նամակն Արեգ Քոչինյանի գրասենյակից էի ստացել, սակայն ինձ անձամբ Նաիրա Սուլթանյանն էր հրավիրել: Ես ներգրավված չեմ հայ-ադրբեջանական որեւէ պրոցեսում: Պատերազմի պարտությունից ես ոչ մի հայ-ադրբեջանական հանդիպման, քննարկման չեմ մասնակցում: Տարբեր տեղերից՝ տարբեր երկրներից հրավերներ եմ ստացել այս ընթացքում, այդ թվում՝ հենց այս շրջանակի կողմից, որի մասին զրուցում ենք, սակայն ես չեմ մասնակցել՝ համարելով, որ այս պահին նման հարթակներում ես անելիք չունեմ: Երկար ժամանակ ներգրավված եմ եղել հայ-ադրբեջանական ֆիլմարտադրություններում, տարբեր ֆորումներում, անգամ Բաքու եմ գնացել, սակայն պատերազմից հետո ես չեմ ցանկանում լինել այդ հարթակներում: Դիլիջանում կայացած քննարկմանն էլ որեւէ ադրբեջանցի ներկա չի եղել, բացառապես հայեր են ներկա եղել, հավաստիացնում եմ, որ մաքուր ներհայկական քննարկում էր, ասեմ ավելին՝ ներկաներից շատերը երբեք չեն ողջունել հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործընթացը, չեմ ուզում պիտակավորել, բայց նրանք հիմնականում ռուսամետ շրջանակներն են, որոնք եւս այդ հանդիպմանը ներկա էին: Բավականին ներկայացուցչական հավաք էր»: Հարցին, թե Իլհամ Ալիեւի վերջին կոշտ հայտարարությունների մասին ինչ կարծիք ունի, Իլհամն օրերս մի քանի կոշտ հայտարարություններ է արել Հայաստանի եւ հայ ժողովրդի դեմ, օրինակ՝ ասել է, որ թշնամի հայերին պետք է մշտապես վախի մեջ պահել, վերջապես Ղարաբաղն ազատագրվեց նրանցից եւ այլն, Հակոբյանը պատասխանեց. «Այդ հայտարարությունը Խոջալուի օրվա հետ էր կապված: Այդ հայտարարությունները հարիր չէին վերջին պրոցեսներին, վերջին շրջանի հռետորաբանությանը: Ադրբեջանական կողմը վերջին շրջանում հակահայ հռետորաբանությունը թուլացրել էր.... բայց ես կարծում եմ, որ այդ հայտարարությունները բացառապես պայմանավորված էին Խոջալուի հուշարձանի բացման արարողությամբ»:

Ռեժիսոր **Ռուբեն Բաբայանն** էլ, խոսելով հավաքի մասին, ընդգծեց. «Ինչպես գիտենք, Ծաղկաձորում հայ-ադրբեջանական կողմերի միջեւ հանդիպում էր տեղի ունեցել՝ քաղհասարակության ներկայացուցիչների հետ, այժմ կողմերն առանձին-առանձին քննարկումներ են կազմակերպում քաղհասարակության ներկայացուցիչների հետ՝ երկրների ներսում, խոսում են հանդիպումների, դրանց բովանդակության մասին, հարցերին են պատասխանում, լսում են կարծիքներ եւ այլն: Զուտ ինֆորմացիոն բնույթի գործընթացներ են դրանք, որպեսզի ավելի շատ մարդիկ իմանան, թե ինչի մասին են այդ հանդիպումները եղել: Ինձ համար որեւէ նոր բան չկար: Քաղհասարակությունների հաջորդ հանդիպումը նախատեսված է Ադրբեջանում, սակայն հստակ օր ասել չեմ կարող, չգիտեմ: Այս հանդիպման նպատակն այն է, որ փակ թեմաներ չմնան մարդկանց համար: Գերիների հարց, ճանապարհների հարց, ատելությունը վերացնելու հարց, դասագրքերի մասին հարցեր եւ այլն, այսինքն՝ հռետորաբանության հետ կապված հարցեր, անվանումներ եւ այլն»: Բայց Ալիեւը հայերի մասին օրեր առաջ ամենաեղկելի հայտարարություններն է արել՝ կրկին ատելության խոսք տարածելով: «Դե, Ալիեւը դա էլ է ասում, այլ բաներ էլ է ասում: Նա նաեւ ասում է, որ ազերիները չպետք է հայերի հետ հանդիպեն, սակայն, ինչպես տեսանք, նրա ասածը ոչինչ չարժեցավ: Ես չեմ կարծում, որ ինչ-որ քաղաքական գործչի խոսք, հատկապես այն գործիչների խոսքերը, որոնք հաճախ ենթարկվում են փոփոխության, պետք է այդքան լուրջ ընդունել: Հեշտ ճանապարհ չէ սա: Այնպես չէ, որ բոլոր խնդիրները լուծված են, առավել եւս՝ այսքան զոհերից հետո, սակայն պետք է գնալ այս ճանապարհով: Անցյալի մասին միշտ պետք է հիշել, որպեսզի այն չկրկնվի: Այսօր՝ մեր ժամանակներում, երաշխիքների մասին խոսելն այնքան էլ իրատեսական չէ, քանի որ նույն Ուկրաինան էլ ուներ մեծ երաշխիքներ, սակայն տեսանք, թե ինչ եղավ: Մեզ ծանր ճանապարհ է սպասվում, կլինեն խոչընդոտներ, 30 տարվա կոնֆլիկտից հետո չի կարող ամեն ինչ միանգամից լավ լինել, սակայն պետք է աշխատել այդ ուղղությամբ, որովհետեւ այն առաջին հերթին մեզ է պետք, պետք է զարգանանք, ճանապարհներ բացվեն: Երբ ինձ հարցնում են՝ ո՞վ էր այս ամենի մեղավորը, ես միշտ ասում եմ, որ մեղավորն առաջին հերթին ես եմ»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՍՊԻՏԱԿԸ ԴՈՒՐՍ Է ՄՆԱՑԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՔԱՐՏԵԶԻՑ»



Ամիսներ առաջ Սպիտակի համայնքապետ՝ ՔՊ-ական Քաջայր Նիկողոսյանը համայնքի բյուջեից մոտ 283 հազար դրամ գումար էր հատկացրել՝ Աննա Հակոբյանի «Կրթվելը նորաձեւ է» կրթարշավի անցկացման նպատակով հյուրասիրություն կազմակերպելու համար: Օրեր առաջ էլ համայնքապետն իր համայնքի ամենատարեց բնակչին է պարգեւատրել՝ համայնքի բյուջեից 30 հազար 900 դրամ հատկացնելով: Համայնքապետից հետաքրքրվեցինք, թե այդ գումարների հետ կապված որոշումներն ով է կայացրել, եւ ինչու հենց 30 հազար 900 դրամ: «Մենք գումար տալու իրավունք չունենք, բավականին ժամանակ՝ մոտ տարիուկես է՝ օրենքով արգելված է գումար բաժանելը, գումարը հատկացվել է նվերի համար»:

Իսկ հունվարի 26-ին համայնքապետ Քաջայր Նիկողոսյանի որոշմամբ՝ Բանակի օրվա կապակցությամբ, համայնքապետարանի արական սեռի բոլոր 66 աշխատակիցներին՝ համայնքի ղեկավարից մինչեւ պահակ, որոշվել է աշխատավարձից զատ լրավճար հատկացնել, բայց, չգիտես ինչու, շատ առատաձեռն չի եղել: Քաջայր Նիկողոսյանը Բանակի օրվա կապակցությամբ համայնքային բյուջեից ընդամենը 12 հազար 500 դրամ է ստացել, նրա տեղակալ Արտակ Մաթոսյանը՝ 13 հազար 400 եւ այլն: Մենք հետաքրքրվեցինք, թե դա ինչ գումար է: «Լրավճար ենք տվել, քանի որ Բանակի օրն էր: Սոցվճարները հանած, առձեռն բոլոր աշխատակիցները ստացել են 10 հազար դրամ: Որոշեցինք, որ մարտի 8-ի կապակցությամբ էլ իգական սեռի բոլոր ներկայացուցիչներին 10 հազար դրամ տալ»,- պատասխանեցին մեզ համայնքապետարանից:

Հիշեցնենք, որ Սպիտակ համայնքի ղեկավարն անցած տարի նարդու առաջնություն էր կազմակերպել, ինքն էլ մասնակցել ու պատվավոր երրորդ տեղը զբաղեցրել, իրեն էլ հաղթանակի համար 90 հազար դրամով պարգեւատրել: Սակայն այդ փաստը նկատել էր Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը եւ որոշել, որ համայնքապետն իրավունք չուներ նման բան անելու: Տեղեկացանք, որ Հանձնաժողովի որոշմամբ, քաղաքապետն 90 հազար դրամ գումարը վերադարձրել է համայնքի բյուջե:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

# Փաշինյանն ասել է, թե ինչու է «պեռաշկի» ուտում

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը կառավարության երեկվա նիստում՝ մարտի 5-ին, անդրադարձել է տնտեսության աճին եւ պետական կառավարման համակարգում իրականացվող փոփոխություններին: Նշել է, որ իր այս միտքը կարող է զայրացնող լինել ոմանց համար, բայց կարեւոր է՝ բացահայտ ասել այդ մասին: Փաշինյանի խոսքով՝ տնտեսական աճի գերակատարումը պայմանավորված է, մասնավորապես, պետական համակարգի մոտիվացիայի բարձրացմամբ: Նախորդ տարվա մարտ-ապրիլից մեկնարկել է արդյունքի վրա հիմնված վարձատրության համակարգի ներդրումը, ինչը պետական ծառայողների աշխատանքի արդյունավետությունը զգալիորեն բարձրացրել է՝ ասել է նա: Խոսքը միլիոնների հասնող պարգեւավճարների մասին է: Վարչապետն ընդգծել է, որ այդ նոր համակարգն ուղղակիորեն կապված է պետական պաշտոնյաների ցույց տված արդյունքների հետ: Նա բացատրել է, որ այս փոփոխության շնորհիվ հաջողվել է ավելացնել տնտեսական աճը մոտ 2 տոկոսով եւ բարելավել սոցիալական ոլորտի ֆինանսավորումը: Փաշինյանի խոսքով՝ 2025 թվականի բյուջեով պետական համակարգի համար նախատեսված 6.5 միլիարդ դրամը կրճատվել է, ռեզերվացված 3.5 միլիարդն ուղղվել է պետական կառավարման արդյունավետությունը բարձրացնելուն, իսկ 78 միլիարդ դրամն ուղղվել է թոշակառուներին: Փաշինյանը նաեւ նշել է, որ իր որոշումները հիմնված են համակարգի արդյունավետության վրա եւ թույլ են տալիս կենտրոնանալ երկրի ինստիտուցիոնալ զարգացման վրա: Նա շեշտել է, որ պետական համակարգը կարող է իրականացնել քաղաքական խնդիրների լուծումը՝ առանց անձնական միջամտության, ինչպես, օրինակ, առողջության ապահովագրության համակարգի ներդրման դեպքում, որտեղ հունվարի 1-ից այն սկսեց գործել պլանավորված ռեժիմով, ինչը ցույց է տալիս համակարգի պատրաստակամությունն ու կայունությունը:

«Ես ուզում եմ ասել, որ շատ ուրախ եմ եւ շատ գոհ եմ, որ ես՝ ինքս, այդ որոշումները կայացրել եմ, որովհետեւ ես հիմա տեսնում եմ այդ որոշումների պատճառահետեւանքային կապը: Այդ որոշումն է, որ ինձ հնարավորություն է տալիս, կներեք, պեռաշկի ուտել, որովհետեւ ես գիտեմ, որ երկրում ինստիտուցիոնալ մակարդակի կայացման ավելի բարձր մակարդակ կա»,- ասել է Փաշինյանը:

ԽՈՀԸ

Իրանում պատերազմը շուտով կավարտվի: Պատերազմը, բայց ոչ հակամարտությունը, որ այս տարածաշրջանում ծագել է Իսրայել պետության ստեղծումից ի վեր (1948թ.): Իրանն այս պատերազմում իրեն պարտված չի ճանաչի, ԱՄՆ-ն եւ Իսրայելը՝ նույնպես: Հետեւաբար, հարաբերական խաղաղ հակամարտությունը կշարունակվի մինչեւ հաջորդ պատերազմը: Դա են թելադրում կողմերի շահերը: Եվրամիությունը, Աստված Եվրամիությանը երկար կյանք տա, միշտ կլինի դիտորդի դերում: Մենք դրանում համոզվեցինք թե՛ ամերիկա-իրանական 12-օրյա պատերազմի, թե՛ այս եւ թե՛ հարեւան երկրների դեմ Իսրայելի սանձազերծած բազմաթիվ պատերազմների ժամանակ: Սա նշանակում է, որ Եվրամիությունն ընդամենը մի գոյացություն է՝ հավաքական Արեւմուտքում, որին այդ նույն հավաքական Արեւմուտքը թույլ չի տալիս մոտենալ աշխարհաքաղաքական համեղ կարկանդակներին: ԵՄ-ն պարտավոր է բավարարվել այն ամենով, ինչն իրեն կտան աշխարհում հարց լուծող իր գործընկերները:

Տակավին շարունակվող ամերիկա-իրանական պատերազմը, որի բուն նպատակն Իրանի եւ նավթ արտահանող արաբական երկրների մերձեցումը թույլ չտալն է, ինչպես նաեւ մահմեդական աշխարհում Իրանի հարաճուն հեղինակության սասանումը, ունի նաեւ այլ, ոչ պակաս հետաքրքիր շերտեր, որ իրենց մեջ լրջագույն դասեր են պարունակում՝ ողջ մարդկության համար: Հասարակ մի հարց. օրինակ, մե՞ծ է արդյոք տարբերությունը, մի կողմից, Ադոլֆ Հիտլերի եւ, մյուս կողմից, Թրամփի ու Նեթանյահուի միջեւ: Նույն մարդասպանները չե՞ն նրանք: Զենքերն են տարբեր միայն: Նեթանյահուի արձակած մեկ հրթիռից երեխաներով լցված մի ամբողջ դպրոց է վերանում աշխարհի երեսից, իսկ Հիտլերի «Վագր» տանկի կրակոցից՝ մի ռուս ընտանիք՝ խրճիթում: Գերմանացի ժողովրդին ստիպեցին ճանաչել իր ֆաշիստական իշխանության հանցագործությունը հրեա ժողովրդի հանդեպ: Ամբողջ աշխարհը ստիպեց: Ո՞վ է ստիպելու հրեա ժողովրդին՝ դատապարտել Նեթանյահուի՝ Իրանի ժողովրդի հանդեպ նույն ֆաշիստական նկրտումներով այս հանցագործությունը: Սա ողջ մարդկության գործն է, այլապես ողջակիզումներն ու ցեղասպանությունները կշարունակվեն աշխարհում՝ հասնելով ամենախաղաղ երկրներ ու մայրաքաղաքներ:

Այս պատերազմը հրաշալի դաս է նաեւ այն մասին, թե ինչպիսին պետք է լինի կամ չլինի երկրի ղեկավարը: Տարբեր առիթներով հաճախ ենք անդրադառնում այս կամ այն երկրի ղեկավարին, ինքներս մեզ համոզում, թե նա գործում է իր երկրի շահերից ելնելով… Թրամփ, Նեթանյահու, Պուտին, Սի Ծին Պին, Կիմ Չեն Ըն, Էրդողան, Ալիեւ… Իսկ ի՞նչ ասել այս նույն ղեկավարների մասին, երբ նրանք կուրանալու չափ տարվում են իրենց երկրների շահերով եւ դադարում նկատել մյուսների կենսական շահերը, դառնում հազարավոր, անգամ միլիոնավոր մարդկանց մահվան պատճառ: Հույսներս դնում ենք պատմության վրա, թե պատմությունը նրանց կդատի: Բայց չմոռանանք, որ պատմությունը գրվում է այսօր, ու եթե հենց այսօր այն չի արձանագրվում իր կարեւոր անցքերով, պատճառահետեւանքային կապերով ու այլ մանրամասներով, վերածվում է հեքիաթասացության ու վեճի առարկայի: Կարո՞ղ է մեկն ինձ ասել, թե այսօր ինչ են անում ԱՄՆ զինված ուժերի ամենամարտունակ ստորաբաժանումներն Իրանի ափերի մոտ, էն ավիակիրները, որ քշել են մինչեւ իրանական ջրեր, ինչ է՝ ամերիկացի զինվորներին լողացնելու համա՞ր են բերել: Թվարկեք թեկուզ մի քանի ողջամիտ պատճառ: Չեք կարող: Պատճառն Իրանի միջուկային ծրագրե՞րն են: Քավ լիցի, Իրաքում էլ քիմիական զենք էին փնտրում, գտա՞ն: Նավթ ու գա՞զ չէր տալիս Իրանն ԱՄՆ-ին… Հիմարություն: Իրենք երկիրը դրել են պատժամիջոցների տակ, իրենք էլ բողոքում են: Ինչի՞ց եք բողոքում: Մի՞թե հնարավոր չէր ամերիկյան տանկերը քշել իրանական որեւէ նավահանգիստ եւ նավթ առնել Իրանից: Չէ, պիտի զորքով գան, ռումբերով, Իրանի հոգեւոր առաջնորդին սպանեն, որ նավթը տանեն: Սա շատ նման է ռուսական գազի պատմությանը: Հանգիստ, էժան, լավ գներով առնում էին այդ գազը, ամբողջ Եվրոպան գոհ էր, մարդ էլ չէր զոհվում: Յա՜մա՜, բա ո՞նց կլինի… Ուկրաինայում պատերազմ հրահրեցին ռուսների դեմ, պատժամիջոցներ սահմանեցին… Միլիոնով մարդ կոտորվեց, բայց նույն ռուսական գազն այսօր Ադրբեջանից եւ Թուրքիայից առնում են գրեթե կրկնակի գներով: Հիմա ես ի՞նչ մտածեմ եվրոպական լիդերների մասին: Պարոնայք դեմոկրատներ, դուք ձեր երկրների ու ժողովուրդների շահերի համա՞ր եք անում այս ամենը:

Նորմալ առաջնորդի կերպարն ամբողջական չի լինի, եթե այստեղ չհիշատակենք Իրանի գերագույն առաջնորդ այաթոլա Ալի Խամենեիի մահը, որ տեղի ունեցավ ԱՄՆ-ի եւ Իսրայելի հրթիռների հարվածից: Մարդը չգնաց, չթաքնվեց բունկերում, մնաց սիրելի ժողովրդի հետ՝ մինչեւ իր վերջին շունչը: Վերը թվարկված առաջնորդներից շատե՞րն են ընդունակ դժվար պահին այդպիսի կեցվածք որդեգրելու: Իսրայելո՞ւմ է, արդյոք, Նեթանյահուն, երբ Թել Ավիվում եւ Երուսաղեմում իրանական ռումբեր են պայթում: Թրամփն ինչո՞ւ է նստել հեռավոր Վաշինգտոնում: Այնտեղից հե՞շտ է հաշվել զոհված ամերիկացի զինվորներին ու ծախսված միլիարդները: Ինչեւէ, Խամենեիի մահը եւս մի դաս էր այս պատերազմից, որ մարդկությանը մեկ օրում ավելի լավը դարձրեց:



# ՉԱՎԱՐՏՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԱՍԵՐԻՑ

**ՀԳ.** *Ես նախընտրեցի ՀՀ իշխանությունների մասին ոչինչ չասել… Առհասարակ, ես միշտ այդպես եմ վարվում, երբ չեմ կարողանում հանգուցյալի մասին լավ բան ասել: Ուրախ եմ, սակայն, որ ամերիկա-իրանական պատերազմը մեր ժողովրդին եւս մեկ անգամ հիշեցրեց, թե ինչպես է ինքը դարեր շարունակ պայքարել իր անկախության համար ու ինչպես այդ անկախությունն իր ապիկար իշխանությունների պատճառով դրեց վտանգի տակ: Դա՞ս է… Իհարկե, այն էլ ինչպիսի դաս:*

**Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**
**edik.andreasyan@hraparak.am**

# ՔՊ ՆՈՐ ԿԱՐԳԱԽՈՍԸ. ԵԹԵ ՄԵԶ ՉԸՆՏՐԵՔ, ԱԴՐԲԵՋԱՆԸ ՁԵԶ ԿՍՊԱՆԻ

Չկարողանալով հասարակությանը որեւէ դրական խոստում տալ՝ ՔՊ-ն անցել է բացահայտ շանտաժի եւ սպառնում է, որ եթե մարդիկ իրենց չընտրեն, կլինի պատերազմ: Եթե այս բանաձեւն ավելի բացենք, կստացվի, որ ՔՊ-ի եւ ՔՊ-ականների ասածը հասարակությանը հետեւյալն է. եթե մեզ չընտրեք, ձեզ, ձեր երեխաներին եւ հարազատներին կսպանեն, լավագույն դեպքում՝ դուք ստիպված կլինեք թողնել ձեր գույքն ու ունեցվածքը եւ փախչել երկրից՝ այդ ամենը թողնելով Ադրբեջանին եւ Թուրքիային: Չեք հավատում՝ տեսեք, թե մեր իշխանության տարիներին ինչ եղավ Արցախի եւ արցախցիների հետ:

ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանն այդ շանտաժը ձեւակերպում է այսպես. «Մեր հաղթանակից է կախված խաղաղության շարունակականությունը, մեր հաղթանակից է կախված, թե այն պրոցեսները, որ մենք սկսել ենք ապաշրջափակման, ԹՐԻՓ-ի, էքզիստենցիալ գոյաբանական ճգնաժամից դուրս գալու եւ ի վերջո զարգացման հուն տանելու, էս ամեն ինչը, վստահաբար, կախված է մեր հաղթանակից: Ընդդիմադիր ուժերն այնպիսի առաջարկներ են անում, որոնք որ քանդելու են խաղաղության ճարտարապետությունը»:

Երբ լրագրողները հարցնում են, թե ընդդիմության ինչ առաջարկների մասին է խոսքը, ընդդիմությունն ասում է, որ խաղաղությունը պետք է լինի արժանապատիվ պայմաններով, Կոնջորյանը պատասխանում է. «Ես բացատրում եմ, թե ընդդիմության գործողությունները ոնց կարող են հանգեցնել պատերազմի. մենք ասում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է սահմանազատվի, կա սահմանազատման հանձնաժողով: Եթե ընդդիմությունը դեմ է, Դաշնակցության 004 շրջաբերականով, Դաշնակցությունը, որն այսօր խորհրդարանում առաջին ընդդիմադիր ուժն է, եթե էդ ուժն ասում է, որ ինքը դեմ է սահմանազատմանը, եթե էդ ուժը սահմանազատման պրոցեսի ժամանակ դուրս է գալիս փողոց եւ փորձում է վիժեցնել սահմանազատման գործընթացը, եթե էդ ուժը գնում ա մարզեր եւ մարդկանց ասում ա, որ հեսա էս հողերը տալու են, 16 միլիոն դրամի ծրագրով տներ մի կառուցեք, եւ մարդկանց մի մասը, շփոթմունքի մեջ ընկնելով, իսկապես չի օգտվում էդ 16 միլիոնի ծրագրից, բա դա խաղաղության դեմ արշավ չի՞, բա դա պատերազմի չի՞ մոտեցնում»:

Երբ ընդդիմությունն ասում է, որ պետք չէ միակողմանի զիջումների գնալ Ադրբեջանին, առանց որեւէ փոխզիջման Ադրբեջանին հանձնել Հայաստանի իսկողության տակ գտնվող տարածքներ, այն դեպքում, երբ Ադրբեջանն իր իսկողության տակ է պահում ՀՀ զգալի տարածքներ, ստացվում է, որ ընդդիմությունը պատերազմ է հրահրում, երբ ընդդիմությունը մարդկանց զգուշացնում է, որ իմաստ չունի բնակարան կառուցել մի տարածքում, որն իշխանությունը վաղը կարող է հանձնել Ադրբեջանին, իսկ նման դեպքեր կան, երբ մարդկանց սեփականությունը հանձնվել է Ադրբեջանին, դրանով պատերազմ է հրահրում: Որտե՞ղ է այստեղ տրամաբանությունը, ինչո՞ւ Ադրբեջանը պետք է պատերազմ սկսի միայն նրա համար, որ Հայաստանի քաղաքացին հրաժարվում է ինչ-որ տարածքում բնակարան կառուցել, ստացվում է, որ ոչ միայն պետությունը, այլեւ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի այսուհետ իր բոլոր ծրագրերը, այդ թվում՝ բնակարանաշինական, պետք է համաձայնեցնի Ադրբեջանի հետ, այլապես Ադրբեջանը պատերազմ կսկսի:

Կոնջորյանի ասածի մեջ ամենակարեւորը «խաղաղության ճարտարապետություն» բառակապակցությունն է, այն կոնցեպտը, որի միջոցով իշխանությունը խաղաղություն է կառուցում, կանխում է Ադրբեջանի հարձակումը Հայաստանի վրա: Այդ ճարտարապետությունը շատ պարզ ձեւակերպում ունի՝ պետական եւ անհատական մակարդակում կատարում ենք Ադրբեջանի եւ Թուրքիայի ցանկացած պահանջ, եւ նրանք առիթ չունեն պատերազմ սկսելու: Այո, ցանկացած պահանջ, նույնիսկ եթե այդ պահանջները լինեն տրամաբանությունից կամ բանականությունից դուրս: Օրինակ, Կոնջորյանին պետք է հարցնել, որ եթե վաղը Ադրբեջանը պահանջի, որ Հայաստանն իրենց հանձնի Սեւանա լիճը, բնական է, որ ձեր իշխանությունը միանգամից կհամաձայնի, որովհետեւ դա տեղավորվում է ձեր «խաղաղության ճարտարապետության» մեջ, ընդդիմությունը, բնական է, դեմ կլինի դրան, այդ դեպքում դուք ընդդիմությանը մեղադրելու եք խաղաղության ճարտարապետությանը դեմ գնալու եւ պատերազմ հրահրելու մեջ:



Սա այնքան էլ անհավանական կամ հորինված սցենար չէ. քանի դեռ Հայաստանում կա մի իշխանություն, որը պատրաստ չէ դիմադրություն ցույց տալ Ադրբեջանին, կա մի իշխանություն, որի խաղաղության ճարտարապետությունը հիմնված է հպատակության եւ թշնամու բոլոր պահանջները հնազանդորեն կատարելու մեջ, թշնամին կարող է դնել ցանկացած պահանջ եւ հասնել դրա կատարմանը:

Կոնջորյանը եւ Փաշինյանը հայ հասարակության ճակատին դեմ են տվել ադրբեջանական ատրճանակ եւ սպառնում են մեզ պատերազմով, մահով եւ ունեզրկմամբ, եթե մենք չընտրենք իրենց: Ահա թե ինչպես Հայաստանի եւ հայ հասարակության թշնամի Ադրբեջանը դարձել է իշխանության՝ Փաշինյանի եւ Կոնջորյանի դաշնակիցը:

**Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**

# ԻՐԱՆԻ ՀԱՋՈՐԴ ԹԻՐԱԽԸ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ԲԱՔՈՒ-ՋԵՅՀԱՆ ԳԱԶԱՄՈՒՂԸ

*«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ Ստեփան Դանիելյանն է:*



**- Արդարացիորեն նկատել եք աշխարհաքաղաքական մի կարեւոր նյուանս՝ պատահական չէ, որ ԱՄՆ պաշտպանության նախարարությունն անվանափոխվել եւ դարձել է պատերազմի նախարարություն: Վերջին զարգացումները վկայեցին, որ Թրամփի վարչակազմը բացահայտորեն խոստովանում է, որ ոչ թե ԱՄՆ պաշտպանության խնդիրն է դրված, այլ պատերազմներ վարելու նախաձեռնություն է սա:**

- Դրան կարելի է ավելացնել օրերս ԱՄՆ պատերազմի նախարարի մի հայտարարությունը, որ իրենց նպատակը պատերազմներում հաղթելն է, եւ հիմարություն է պատերազմի կանոնների մասին խոսելը: Նա նաեւ ասել է, որ այլեւս այնպիսի հիմար բաները, ինչպիսիք այլ երկրների պետական շինարարությունն ու դեմոկրատիան են, իրենց չի հետաքրքրում: Մյուս կողմից, պետք է վերջնականապես ֆիքսել, որ միջազգային կառույցներն ու արդեն անցյալի համաշխարհային կարգն այլեւս չկան, մենք մտել ենք վայրի եւ գիշատիչ, առանց կանոնների պատերազմների փուլ: Մյուս կողմից, ԱՄՆ-ում լայն քննարկման թեմա է դարձել այն հարցը, թե որքանով է Ամերիկան ինքնիշխան պետություն ու որքանով՝ Իսրայելի կցորդը:

**- Իրանի դեմ ամերիկա-իսրայելական ռազմական գործողությունները հերթական սպանդանոցի են վերածել Մերձավոր Արեւելքը եւ ոչ միայն: Ավելին, Բաքուն ժամեր առաջ հայտարարեց, թե իրանական ԱԹՍ-ները գրոհել են Նախիջեւանի օդանավակայանն ու այլ օբյեկտներ: ԱԳՆ-ն ու ՊՆ-ն էլ Թեհրանին սպառնացել են հակահարված տալ: Որքանո՞վ է իրատեսական երկու երկրների բախումը, եւ ի՞նչ է սպառնում այդ դեպքում Հայաստանին:**

- Իրանը ստիպված է կյանքի ու մահի պատերազմ վարել, եւ նժարին դրված է Իրանի պետականության կորստի հարցը: Նման պայմաններում ցանկացած կայացած պետություն եւ ազգ պատրաստ է ցանկացած գործողությունների: Իրանը թույլ կողմն է եւ փորձում է այնպես անել, որ պատերազմի հետեւանքներն իրենց վրա զգան բոլոր երկրները, ու փորձում է էներգետիկ համաշխարհային ճգնաժամ ստեղծել: Այս իմաստով տրամաբանական է սպասել, որ հաջորդ թիրախը կլինի Բաքու-Ջեյհան գազամուղը: ԵՄ-ն հույս ունի, հրաժարվելով ռուսական գազից, կորցնելով Նեղուցի երկրների, հատկապես Կատարի հեղուկ գազը, ինչ-որ կերպ բացը լրացնել Ադրբեջանից եկող գազով, եթե այն անգամ ռուսական ծագում ունենա: Կրկնում եմ՝ տրամաբանական է սպասել Բաքու-Ջեյհանի վրա գրոհին, իսկ Նախիջեւանին հարվածելն ընդամենը կարող է դրա առաջին քայլը լինել:

**- Թրամփը կարող է մեկ օրում հարվածել Կարակասին, առեւանգել Վենեսուելայի նախագահին, մեկ գիշերում որոշել ու սպանել Խամենեիին, Իրանի ռազմաքաղաքական էլիտայի այլ ներկայացուցիչների: Պատերազմներ, այդ թվում՝ հայ-ադրբեջանական հակամարտությանը վերջ դնելու մասին անվերջ պարծեցող, Խաղաղության նոբելյան մրցանակի մասին երազող առաջնորդն արդյո՞ք իրականում համաշխարհային պատերազմական քաոսի նախաձեռնողը չէ:**

- ԱՄՆ-ում հրապարակային քննարկումներ են գնում, թե որքանով է Թրամփն ինքնուրույն գործիչ եւ որքանով՝ Իսրայելի շահերը սպասարկող անձ: Նաեւ տարբեր կարծիքներ կան, որ եթե դա այդպես է, ապա ո՞րն է Իսրայելի քաղաքականությունը: Ըստ երեւույթին՝ Իսրայելը ցանկանում է պատերազմների մեջ «այրել» ողջ տարածաշրջանը, մասնատել մեծ երկրները, ազգերի միջեւ հրահրել անհաշտ թշնամություն եւ դրանով վերահսկել ողջ տարածաշրջանը:

**- Գնահատականներ կան, որ Իրանի դեմ գործողությունը կարող է տեւել 100 օր կամ մինչեւ սեպտեմբեր: Եթե սա իրականություն դառնա, ի՞նչ է սպասվում, օրինակ, TRIPP-ի ճակատագրին, հաշվի առնելով նաեւ իրանա-ադրբեջանական հնարավոր լարվածության աճը:**

- Դա շատ լավատեսական սցենար է: Անկախ նրանից, թե Իրանի դեմ գործողությունները որքան կտեւեն, ողջ տարաշրջանն արդեն երկար ժամանակով ապակայունացման մեջ է հայտնվել, եւ մոտակա տարիներին մենք մեծ պատերազմների մեջ ենք հայտնվելու: Այս ամենի հետեւանքները տարիներ են տեւելու:

Արա ԱԼՈՅԱՆ

# ՂԱԼՈՒՄՅԱՆՆ ԻՐ ՔԵՌՈՒ ԱՂՋԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼ Է ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ



Տավուշի մարզպետարանի կայքը հայտնում է, որ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը որոշել է Կարինե Գրիշայի Ծովանյանին 2026թ. փետրվարի 16-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Սեւքարի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առեւտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող՝ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով: Կարինե Ծովանյանը Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի քեռու աղջիկն է, մինչեւ դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող նշանակվելը աշխատել է նույն դպրոցում՝ որպես դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ:

2025թ. սեպտեմբերի 19-ին «Հրապարակի» «Մարզպետի բարեկամի համար պաշտոնն ազատեցին» հոդվածում գրել եմ, որ 2025թ. սեպտեմբերի 15-ին մարզպետ Հայկ Ղալումյանը, ղեկավարվելով մի շարք օրենքներով եւ հիմք ընդունելով Վարդան Մադաթյանի՝ 2025թ. սեպտեմբերի 15-ի դիմումը՝ ազատել իրեն Սեւքարի միջնակարգ դպրոցի վարչատնտեսական մարմնի համակարգողի պաշտոնից, բավարարել է նրա դիմումը եւ նույն օրը՝ սեպտեմբերի 15-ին, Վարդան Մադաթյանին նշանակել Բերքաբերի միջնակարգ դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող՝ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ մինչեւ 2028թ. ապրիլի 7-ը: Մարզպետը Վ. Մադաթյանին Սեւքարի միջնակարգ դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող էր նշանակել 2024 թ. հունիսի 7-ին, նրա հետ աշխատանքային պայմանագիր էր կնքել մինչեւ 2028թ. ապրիլի 7-ը:

Ինչո՞ւ Սեւքարի միջնակարգ դպրոցի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնում մեկ տարի եւ 3 ամիս աշխատելուց հետո Վ. Մադաթյանը դիմում գրեց՝ ազատվեց այդ պաշտոնից եւ զարմանալի արագությամբ՝ նույն օրը նշանակվեց Բերքաբեր գյուղի դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող: Վ. Մադաթյանը Սեւքարի հարեւան Սարիգյուղի բնակիչ է, Սեւքար գյուղի փեսա, նրա համար Սեւքարի դպրոցում վարչատնտեսական մասի համակարգող աշխատելն ավելի հարմար է, քան սահմանամերձ՝ Սարիգյուղից բավական հեռավորությամբ գտնվող Բերքաբերի դպրոցում: Այդ հոդվածում գրել ենք, որ Սեւքարի միջնակարգ դպրոցում աշխատում են մարզպետ, արմատներով Սեւքար գյուղից Հայկ Ղալումյանի հարազատ բարեկամները, եւ նրանցից մեկին մարզպետն առաջիկայում նշանակելու է Սեւքարի դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող, եւ հենց այդ պատճառով էլ մարզպետը թափուր է դարձրել Սեւքարի դպրոցի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնը:

Մեր հրապարակումից 6 ամիս անց այդպես էլ եղավ, մարզպետն իր քեռու աղջիկ Կարինե Ծովանյանին նշանակեց Սեւքարի դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող: 2025թ. նոյեմբերի 19-ին մարզպետ Հ. Ղալումյանին հարցում եմ արել. «Նոյեմբերի 19-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներից քանիսո՞ւմ է նշանակված վարչատնտեսական մասի համակարգող: Ի՞նչ առաջնահերթությամբ եք դպրոցներում նշանակում վարչատնտեսական մասի համակարգող, ի՞նչն է պատճառը, որ մարզի փոքր, նորակառույց դպրոցում վարչատնտեսական մասի համակարգող եք նշանակել, իսկ մեծ, բազում խնդիրներ ունեցող դպրոցներում՝ ոչ»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Նոյեմբերի 19-ի դրությամբ մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներից 16-ում նշանակված է վարչատնտեսական մասի համակարգող: Կառավարման նոր համակարգի անցած դպրոցներում նոր կարգով դպրոցի տնօրեն ընտրելուց հետո դպրոցում նշանակվում է վարչատնտեսական մասի համակարգող»:

Սակայն մարզպետի նշած այդ կարգը չի պահպանվում: ԱԺ ընտրություններից առաջ վարչատնտեսական մասի համակարգող են նշանակում, որ նրանք ընտրություններում քվեներ ապահովեն իշխանության համար: Մարզպետ Հ. Ղալումյանը փետրվարի 16-ին Նարա Եղիգարյանին նշանակել է Ոսկեվանի միջնակարգ դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող, մարտի 2-ին Արգամ Թամրազյանին՝ Թեղուտի դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

## Ինչ դեր են խաղալու քրդերը Մերձավոր Արեւելքի նոր էսկալացիայում

Մերձավորարեւելյան լրատվամիջոցների հրապարակումների համաձայն, Իրաքից քրդերը սկսել են մասնակցել Իրանի կրոնապետական վարչակարգի դեմ իրականացվող ռազմական արշավին: Ըստ հրապարակումների, Միացյալ Նահանգների Կենտրոնական հետախուզական վարչությունը քրդական զինված խմբավորումներին դիտարկում է որպես գործիք՝ Իրանի դեմ ճնշումն ավելացնելու համար, թեեւ պաշտոնապես քրդական շրջանակներից հայտարարություններ հնչել են, որ չեն ներքաշվելու այժմյան «մեծ հրդեհի» մեջ: Միջազգային մի շարք լրատվամիջոցներ հայտնում են, որ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմից խորհրդակցություններ են անցկացրել Իրաքյան Քուրդիստանի քուրդ առաջնորդների եւ իրանական ընդդիմադիր շրջանակների ղեկավարների հետ: Խոսքը քուրդ զինված խմբավորումներին ցուցաբերվելիք աջակցության մասին է, որոնք գործում են իրանա-իրաքյան սահմանի երկայնքով:

Տարբեր աղբյուրների գնահատմամբ՝ ռեգիոնում ոչ պակաս, քան հազար իրանցի քրդական զինյալներ կան, որոնց մի մասը պատրաստ է ակտիվ աշխատել Թեհրանի դեմ: Առհասարակ, եթե ուշադիր լինենք վերլուծաբաններին, ապա քրդական գործոնն ավանդաբար հանդիսանում է առավել զգայուն բաղադրիչներից մեկը ռեգիոնալ քաղաքականության ոլորտում: Քրդերն ապրում են միանգամից մի քանի ռեգիոնալ երկրում՝ Իրան, Իրաք, Թուրքիա եւ Սիրիա: Եվ քրդական զինված խմբավորումներին աջակցությունը արտաքին խաղացողների մոտ հաճախ դիտարկվում է որպես տվյալ երկրներից որեւէ մեկի վրա կենտրոնական իշխանության նկատմամբ ճնշումներ գործադրելու միջոց: Իրանի համար քրդական շարժումների ակտիվացումը, ըստ փորձագետների, համարվում է լուրջ ռիսկ՝ ներքին անկայունության համար, հատկապես՝ սահմանամերձ շրջաններում: Դրա համար է, որ Թեհրանն ավանդաբար բավականին խիստ ձեւով է արձագանքում ռեգիոնում ցանկացած ռազմական խմբավորման դիրքերի ամրացմանը: Եթե հաջողվի քրդերին ներքաշել ներկայիս ռեգիոնալ «մեծ հրդեհի» մեջ, ապա հնարավոր է, որ զգալիորեն բարդանա Իրանի իշխանությունների գործը: Նաեւ՝ կարող է տարածվել հարեւան երկրներում, որտեղ քրդերը զգալի թիվ եւ ուժ են ներկայացնում՝ նշում են վերլուծաբանները:

**Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՃԳՆԱԺԱՄ

# ՎԱՆԱՁՈՐԻ ԳԼՈՒԽԿՈՏՐՈՒԿԸ. ՔԱՂԱՔ, ՈՐԸ ՄՆԱՑԵԼ Է ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Լոռիում մի խոսույթ է տարածվում. «Վանաձորը՝ Հայաստանի երրորդ քաղաքը, վերածվել է քաղաքական հակամարտության դաշտի»: Այն, որ «օրենք», «արդարություն», «արդարադատություն» հասկացությունները դարձել են ձեւական բառեր, ամենից շատ նկատելի է Վանաձորում: Որ ոլորտին նայես՝ քաոս է, իսկ քաոսի պայմաններում կառավարելը հեշտ է. կարելի է քաոս ստեղծել եւ հանրային կյանքը վերածել համատարած մղձավանջի:

Այդ քաոսը վերեւից իջնում է համայնքներ՝ մեծ երկրի փոքր մանրակերտներին: Այն, ինչ տեղի ունեցավ Վանաձորում մոտ 5 տարի առաջ՝ ՏԻՄ ընտրություններից հետո, եւ ինչ շարունակվում է այսօր, շատերի համար մնացել է գլուխկոտրուկ: Ոչ միայն իշխանությունները չեն կարողացել համոզիչ բացատրություն տալ, այլ մինչեւ անգամ նարդու սեղանի շուրջ տրտնջացող քաղաքացիները չունեն հստակ պատասխաններ: Մի կողմից՝ 2021-ի ՏԻՄ ընտրություններում հաղթած ուժ, ընտրություններից օրեր անց ձերբակալված առաջնորդ, դատական գործընթաց եւ դատավճիռ, մյուս կողմից՝ ավագանու նիստեր, որոնք չեն կայանում, եւ քաղաք, որն ապրում է կառավարման ճգնաժամի ռեժիմում: Այս պատմության կենտրոնում Մամիկոն Ասլանյանն է, որի ղեկավարած «Մամիկոն Ասլանյան» դաշինքը՝ շուրջ 39 % ձայնով, 2021 թ. դեկտեմբերի 5-ին Վանաձորում կայացած ՏԻՄ ընտրություններում հաղթեց: Երկրորդ տեղում «Քաղաքացիական պայմանագիրն» էր, երրորդում մոտ 15% ձայնով Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցությունն էր, որի ցուցակը գլխավորում էր Արկադի Փելեշյանը, որը Վանաձորի համայնքապետ դարձավ՝ առանց ընտրվելու:

Թեեւ ոչ մի ուժ բացարձակ մեծամասնություն չուներ, սակայն ընդդիմությունը կարող էր միավորվել, եթե 10 օր անց՝ դեկտեմբերի 15-ին, Ասլանյանը չձերբակալվեր: Մեղադրանքը՝ պաշտոնեական լիազորությունների չարաշահում եւ պաշտոնեական կեղծիք՝ հողերի օտարման ինչ-որ որոշումների առնչությամբ: Պարզ էր, որ ընտրություններից անմիջապես հետո կալանավորվելը քաղաքում իշխանությունը զավթելու նպատակ է հետապնդում: Իշխանությունը շարունակ հերքում է՝ գործընթացը բացառապես իրավական է: Հարցը՝ եթե ամեն ինչ իրավական էր, ինչո՞ւ այն համընկավ քաղաքական թեժ, հանգուցային պահին, ինչո՞ւ մինչեւ ընտրությունը չձերբակալեցին, այլ՝ հետո: Արդյո՞ք պատճառն այն չէ, որ նա խանգարում էր ՔՊ-ի իշխանությանը Վանաձորում:

2024 թ. հունվարին հակակոռուպցիոն դատարանը մեղավոր ճանաչեց Ասլանյանին եւ վերջնական պատիժ նշանակեց 4 տարի 4 ամիս ազատազրկում (կալանքի ժամկետը հաշվարկված պատժաչափի մեջ), ինչպես նաեւ տուգանք եւ պաշտոն զբաղեցնելու արգելք՝ 3 տարով: Փաստացի, ազատազրկման ենթակա ժամկետը կազմեց 1 տարի 9 ամիս: Ասլանյանի եւ նրա կողմնակիցների նկատմամբ քաղաքական ճնշումը շարունակվում է: Միայն այն փաստը, որ քննությունն ու դատավարությունն այդքան ձգձգվեցին, արդեն վկայում է քաղաքական հենքի մասին: Եվ այդ ընթացքում, քանի որ երկար ժամանակ համայնքը ղեկավար չուներ, վարչապետ Փաշինյանն օրենքում համապատասխան փոփոխություն արեց եւ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակեց Արկադի Փելեշյանին: Բայց քաղաքական հարցը մնաց՝ ինչո՞ւ չանցկացվեցին նոր ընտրություններ: Ինչո՞ւ է մինչ այժմ համայնքը ղեկավարում ԺՊ-ն: Եթե իշխանությունը վստահ էր, որ հանրային աջակցություն ունի, ինչո՞ւ չգնաց նոր ընտրությունների՝ համայնքային իշխանության լեգիտիմությունը վերականգնելու համար: Վախենո՞ւմ էին պարտվելուց: Բայց չէ՞ որ ամեն օր հայտարարում են, թե համապետական ընտրություններում արդեն հաղթել են:

Մինչդեռ Վանաձորի համայնքապետը 4 տարի ԺՊ է, իսկ ավագանու նիստեր 4 տարում գրեթե չեն գումարվել՝ քվորումի բացակայության, բոյկոտի պատճառով: Քաղաքի կառավարումը, ըստ էության, կաթվածահար է, եւ Հայաստանի երրորդ քաղաքը վերածվել է քաղաքական հակամարտության դաշտի: Համայնքային խնդիրները՝ ճանապարհներ, ենթակառուցվածքներ, ներդրումներ, ծրագրեր, գնացել են երկրորդ պլան: Եվ սա արդեն քաղաքական ճգնաժամ չէ միայն. սա սոցիալ-տնտեսական ծանր հետեւանքներով ճգնաժամ է:

Մամիկոն Ասլանյանի ձերբակալության օրը դատարանի բակում հավաքվել էին քաղաքացիներ, որոնք հայտարարում էին, որ պաշտպանում են իրենց ձայնը, իրենց ընտրության արդյունքը: Երբ հասարակությունը բաժանվում է իրավունքի եւ քաղաքականության ընկալումների միջեւ, տուժում է վստահությունը եւ դատարանների, եւ ընտրությունների, եւ կառավարման համակարգի նկատմամբ: Քաղաքացիների հիմնական հարցերը նույնն են այսօր, նույնն են լինելու նաեւ վաղը. եթե ընտրված ուժը ստացել էր ամենաշատ ձայները, ինչո՞ւ արդյունքը չվերածվեց լիարժեք կառավարման: Այս հարցերը լռեցնել հնարավոր չէ: Դրանք հնչում են Վանաձորի փողոցներում՝ ծածուկ կամ բացահայտ: Նախկին քաղաքապետ Մամիկոն Ասլանյանի գործը դարձավ ժամանակակից Հայաստանի ամենաքննարկվող պատմություններից մեկը, ամենաարտառոց ապացույցը, որ ընտրական իրավունքը չի աշխատում, եւ իշխանությունը, իր լծակները



կիրառելով, ամեն գնով իշխանության է հասնում, անտեսելով ընտրողի կարծիքը:

Ընտրություններից հետո տեղի ունեցած զարգացումները հանրությանը բաժանեցին երկու ճամբարի, խարխլեցին իշխող ուժի եւ վարչապետի հանդեպ հավատը: Ցույց տվեցին, որ մի ողջ քաղաք կարող է զրկված լինել լիարժեք կառավարումից եւ անխոչընդոտ զարգացման հնարավորությունից, որովհետեւ քաղաքապետի՝ բնակչության համար նախընտրելի թեկնածուն նախընտրելի չէ կենտրոնական իշխանության համար:

**Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԷՋԵՐՈՒՄ

17-րդ դարի ֆրանսիացի գիտնական, բողոքական հոգեւորական Սամուել Բոշարը գիտական շրջանակներում հայտնի է որպես Աստվածաշնչի աշխարհագրության հետազոտող, որը Սուրբ գրքի էջերում փորձել է գտնել Հայաստանը: Բոշարը ծնվել է 1599 թվականին՝ Ռուանում, պաստորի ընտանիքում: Նրա քեռին հայտնի Պյեր դյու Մուլենն է, որը հայտնի բողոքական կալվինական ուղղության աստվածաբան ու հոգեւորական է եղել, բողոքական ֆրանսիացիների ինտելեկտուալ խորհրդանիշը: Սամուելը գնացել է քեռու հետքերով: 14 տարեկանում հունարենով սկսել է բանաստեղծություններ գրել: Հազիվ 20 տարեկան դարձած, մեկնել է Լեյդեն՝ արաբերեն ուսանելու: Հետո մեկնել է Անգլիա՝ իր ուսուցչի՝ Քեմերոնի հետեւից: Այդ ժամանակ Անգլիայում քաղաքացիական անկարգություններ էին: Ֆրանսիա վերադառնալուց հետո նշանակվել է Կանեի պաստոր ու կյանքի գրեթե ողջ մնացյալ հատվածն անցկացրել այնտեղ: 1652 թվականին շվեդական Քրիստինա թագուհին նրան հրավիրել է Ստոկհոլմ: Բոշարի հետ Շվեդիա է մեկնել նրա աշակերտ Պյեր Դանիել Յուեն՝ Ավրանշի ապագա եպիսկոպոսը: Այդ ժամանակ շվեդական թագավորական պալատում շատ գիտնականներ են հավաքվել՝ Քրիստինա թագուհու հրավերով: Բոշարն աշխատել է արքայական գրադարանի արաբերեն ձեռագրերի վրա: Հետո վերադարձել է Կանն, անդամակցել տեղի ակադեմիային եւ շարունակել աշխատել՝ մինչեւ կյանքի վերջը:

Բոշարը զբաղվել է մի ոլորտով, որը ժամանակակից գիտության մեջ կոչվում է Աստվածաշնչի աշխարհագրություն: Նրա հիմնական աշխատությունը Geographia Sacra, seu Phaleg et Canaan-ն էր, որը լույս է տեսել 1646 թվականին, երկու հատորով: Այն 17-րդ դարի վերջին դարձել է իր ժամանակի ամենահայտնի գիտական աշխատություններից մեկը: Բոշարն իր առաջ դրել էր մի խնդիր, որը նույնիսկ ժամանակակից գիտնականները համարել են անիրագործելի. Ծննդոց գրքում ուսումնասիրել է հիշատակված 70 ժողովուրդների ծագումը եւ դրանք կապել իր ժամանակների Եվրոպայի, Ասիայի եւ Աֆրիկայի ժողովուրդների հետ: Իր կազմած «Ժողովուրդների անվանումների հարացույցում» տեղ գտած յուրաքանչյուր անվանում նա հետազոտել է առանձին-առանձին, փորձել համապատասխանություններ կամ աղերսներ գտնել հունարեն, լատիներեն, արաբերեն, ասորերեն տեքստերում, անվանումների վերաբերյալ ստեղծել վերլուծական շղթաներ: Գրքում ներկայացված քարտեզները, ըստ էության, առաջինն էին, որ ներկայացնում էին Սուրբ Երկիրը եւ ցույց էին տալիս այն տեղավայրերը, որտեղ տեղի է ունեցել Աստվածաշնչի Հին Ուխտի այս կամ այն իրադարձությունը: Դա աստվածաշնչյան առաջին ատլասն էր, որում Հայաստանը հատուկ տեղ ուներ՝ որպես մի երկիր, որի հետ միանգամից մի քանի աստվածաշնչյան սյուժե էր կապվում:




Բոշարը հատկապես քննարկման նյութ է դարձրել «Հայաստան»՝ «Արմենիա» տեղանունը: Նա առաջարկել է մի բացատրություն, որը հետո երկար ժամանակ մեջբերում էին շատ գիտնականներ՝ անկախ այն հանգամանքից, թե համամիտ էին կամ ոչ: Ըստ նրա, Հայաստանի «Արմենիա» տեղանվանաձեւը կապված է հին եբրայական «Հար Միննի»՝ «Միննիի լեռ» անվանման հետ: Միննին մեկն է այն երեք թագավորություններից, որոնք Երեմիա մարգարեն կոչ է անում հանդես գալ Բաբելոնի դեմ: Բոշարը կարծում էր, որ Երեմիայի գրքի 51,27-ում հիշատակված թագավորությունների շարքում կա նաեւ Հայաստանը, եւ այն մեկնաբանությունը, որը Հայաստանի «Արմենիա» տեղանվան հետ կապված առաջարկել է Բոշարը, 17-19-րդ դարերում ամենից տարածվածն է համարվել, թեեւ նաեւ շատ է վիճարկվել: Հայաստանի հետ կապված իր հետազոտության ընթացքում նա հատկապես ուշադրություն է դարձրել այն հանգամանքի վրա, որ Նոյյան տապանը կանգ է առել Արարատի լեռներում: Հասանելի բոլոր հին աղբյուրներն ուսումնասիրելով՝ Բոշարը պնդել է, որ խոսք է գնում Հայաստանի մասին: Նա նաեւ փորձել է Հայաստանը գտնել ժողովուրդների ծագումնաբանության աստվածաշնչյան տեսության մեջ: Անկախ այն հանգամանքից, թե Բոշարի տեսակետներն այսօրվա գիտության կողմից ինչ վերաբերմունքի են արժանանում, պարզ է մի բան, որ նա իր գիտական աշխատանքներում մշտապես փորձել է գտնել Հայաստանը:

**Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՊԱՐՍԱՎԱՆՔԻ ԲԱԺԱԿՆ ԷԼ Է ԼՑՎԵԼ

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am



Թե բա՝ լավ չի, որ դաշնակցականները զենքի վրա են երդվում… Էս ո՞վ են սրանք, արա: Լիկբեզի կարգով ՔՊ ռահվիրային հիշեցնեմ, որ դաշնակցականները երդվում են ոչ թե սովորական, այլ մարտական գործողությունների մասնակցած զենքի վրա: Սարդարապատի կռվից մնացած զենք կլինի, Արցախի ազատագրական պայքարից… Ինքնաձիգ, ատրճանակ, մաուզեր, հրացան… միայն թե հայության համար կռված զենք լինի: Արցախցի ընկերներ ունեմ, որ «Մաքսիմ» գնդացրի վրա են երդվել: Աչքովս եմ տեսել այդ գնդացիրը, որ Շուշի էր ազատագրել: Թե բա՝ զենքի վրա են երդվում ու չեն փոխվում: Չենք էլ փոխվելու, իզուր հույսեր մի փայփայիր:

Դաշնակցականի երդման տեքստին այստեղ չեմ անդրադառնա, որովհետեւ ո՛չ ՔՊ ռահվիրայի, ո՛չ էլ որեւէ ՔՊ-շնիկի ուղեղին դա չի նստի: Անիմաստ է այս կոնտինգենտին բացատրել, թե ինչ ասել է՝ երդվում եմ պատվովս եւ հայրենիքովս… Այս մարդիկ ո՛չ մեկն ունեն, ո՛չ մյուսը: Ի՞նչ սպասես նրանցից, որ մի օր մի բանով երդվում, մյուս օրը ասում են՝ «չեմ ասել հորս արեւ, ասել եմ «հոյս արեւ»»:

ԱԺ-ում արդեն մի քանի առիթով հիշեցրել են իր տարբեր հայտարարությունները, որոնք տրամագծորեն հակառակ են միմյանց: Հարցրել են՝ հիմա ո՞րն է ճիշտը, 2 տարի առաջվա ասա՞ծդ, թե՞ երեկվա ասածդ: Պատասխանում է՝ մենք ժամանակին համահունչ ենք քայլում, իսկ դուք ստատիկ վիճակում եք: Այսինքն, չի պատասխանում հարցին, թռնում է, պեչենու բաղերն ընկնում, դեռ հավելյալ էլ ինձ «վիրավորում, որ 135 տարի մնացել եմ 3-րդ դասարանում ու շարունակում եմ զենքի վրա երդվել: Ի՞նչ ասես «ժամանակի հետ» քայլողին ու ամեն քայլի հետ քամելեոնի նման գույն ու երանգ փոխողին: Ի՞նչ ես հետ գցել… հացկատակ ուսապարկերի մի փոքրիկ խմբա՞կ: Այնպես ես պարծենում քո փոփոխականությամբ, ասես դրա արդյունքում Արցախ ես թողել սերունդներին, խաղաղություն, բարգավաճող երկիր, ավելի մեծ անկախություն, ավելի հզոր բանակ: Թողածդ անտեր մնացած Արցախն է, Կիրանցի պատը, Հայաստանի օկուպացված տարածքները, Ալիեւի անվան «կորիդորը», հարեւանների հետ փչացրածդ հարաբերությունները: Եթե բան մոռացա, հիշեցրու: Հա, քանդված տնտեսություն, հողին հավասարեցված գյուղատնտեսություն, ոչնչացման եզրին հայտնված գիտություն, օտար, ընդհուպ՝ հակահայկական կրթություն: Քո թողած խաղաղության հուշարձանը Կիրանցի պատն է: Եվ, ուրեմն, դու շարունակիր ժամանակի հետ փոխվել, ձեւեր ընդունել, իսկ ինձ հանգիստ թող, որ տեսնեմ՝ ինչպես եմ վերականգնելու այդ բոլոր ավերները: 135 տարի այդ գործին եմ եղել, մի այդքան էլ կմնամ, մինչեւ իմ ժողովրդի միջից հանեմ քո կառավարման տարիների դժնդակ հիշողությունները: Այո, եթե պետք լինի, նաեւ կյանքիս գնով…

Եկել, ինձ ասում է՝ դուք հաջորդ խորհրդարանում չեք լինելու: Էս մարդու ուղեղին դեռ չի հասել, թե ինչու եմ ես ասում, որ այս խորհրդարանական ընտրությունները ոչ թե խորհրդարան անցնելու ընտրություններ են, այլ Հայաստանի լինել-չլինելու հարց: Ինձ պետք չի լինել մի խորհրդարանում, որտեղ շաբաթը մեկ անգամ «կապկազ թամաշա» է բեմադրվում՝ անդունդի եզրին կանգնած ժողովրդին մոլորեցնելու եւ վերջնականապես անդունդը գլորելու հատուկ մտադրությամբ, ինձ պետք չէ այն խորհրդարանը, որը վաղը դակելու է Բաքվից ու Անկարայից եկած որոշումները, ինձ պետք չէ այն խորհրդարանը, որը կողմնորոշվելու է Ադրբեջանի եւ Թուրքիայի դրածոյի մատի շարժումով: Գնա, քայլիր ժամանակիդ հետ, իսկ ինձ հանգիստ թող, որ այս մղձավանջն իրականություն չդառնա:

Թե բա՝ դաշնակցականները զենքի վրա են երդվում… Բա ինչի՞ վրա երդվեմ՝ «պեռաշկու» եւ «կուկուռուզի՞»: Իրար հերթ չեք տալիս՝ լափի վրա երդվելու համար: Ձեր աստվածը կերն է ու հանուն կերի՝ անդուլ խարդավանքները: Դուք դեռ կերդվեք էլ, որ «միայն պեռաշկիով կա ազգի փրկություն»: Դուք ո՞ւր, պետությունն ո՞ւր, որ մի հատ էլ լուրջ բաների վրա երդվեք: Սահմանադրությունից ավելի լուրջ բան երեւի չէր էլ կարող լինել, բայց դա էլ դարձրիք «փալասի կտոր»… Ասում է՝ ես ինչո՞ւ պետք է մտածեմ մեր անվտանգության մասին, եթե դրա համար կան ինստիտուտներ: Ես քո ինստիտուցիոնալ ջանին մեռնեմ, բա մի հատ էլ այդ ինստիտուտները ղեկավարող ուսապարկերիդ անունները հնչեցրու, ինչո՞ւ չես հնչեցնում: Վախենում ես պարսավանքի՞ց: Իզուր… Սրանից այնկողմ, երբ հարեւանիդ տունը կրակ է ընկել, իսկ դու, փոխանակ զգուշանալու, «պեռաշկի» ես կրծում ու մյուս հարեւանիդ տանը համերգ տալիս, ավելի մեծ պարսավանք չի կարող լինել:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am

Ստորագրված է տպագրության 6.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

# ԲՌՆԱՊԵՏԻ ՎԱԽԵՐԸ



Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Բաքվի բռնապետը հերթական ստորացուցիչ հայտարարությունն է արել մեր հասցեին: Բռունցք թափահարելով՝ ասել է, թե իրենց թշնամիները միշտ պետք է վախենան Ադրբեջանից: Առաջին հերթին նկատի է ունեցել, իհարկե, հայաստանցիներիս: Կարծում եմ, որ իրականում դա կարելի է վերագրել միայն ՀՀ վարչապետի պաշտոնը զբաղեցնող անձին ու նրա շրջապատին, իսկ մյուս հայաստանցիների մեջ այդ վախը ներմուծվել է արհեստականորեն՝ նախապես պլանավորված պատերազմով կամ, ավելի ճիշտ՝ դրա պարտությամբ: Այդ հարցում մեր լրագրող Հոխիկյանի ու հրեա բլոգեր Լապշինի ականջները կանչեն: Արհեստականորենի վկայությունն է նաեւ Արցախյան առաջին պատերազմում մեր հաղթանակը: Եվ Փաշինյան Նիկոլի իշխանությունից ազատվելուց հետո այն անպայման դուրս կմղվի մեր միջից: Դրա հետ միասին դուրս կմղվի նաեւ արժանապատվությունը կորցրած ապրելուն համակերպվելը:

Իսկ եթե այդ հարցը դիտարկենք խորությամբ, ապա կարելի է նկատել, որ հենց Իլհամն է վախենում հայ ժողովրդից ու այդ վախը հոգեբանորեն փորձում է հաղթահարել մեզ ուղղված նման հայտարարություններով ու Փաշինյան Նիկոլին անընդհատ ստորացնելով եւ նրա միջոցով ստորացնելով նաեւ մեզ: Իսկ դա դժվար չէ նկատելը, երբ դիտարկում ենք նրա գործողությունները 44-օրյա պատերազմից հետո: Առաջին. Հայաստանի արեւելյան սահմանին հինգ թե վեց զորամաս կառուցելը, ինչպես նաեւ՝ հայաստանյան տարածքներում բարձունքներ գրավելը՝ իր ռազմավարական դիրքերն ամրապնդելու նպատակով, ինչը, ըստ Արման Թաթոյանի, շարունակվել է նաեւ 2025-ին՝ ՀՀ սուվերեն տարածքում կոմունիկացիաներ ու թաքստոցներ կառուցելով: Հասկանալի է, որ վաղը դա կարող է վերածվել նաեւ հարձակման հարմար զինադաշտի (պլացդարմի), եթե, իհարկե, նման հնարավորություն ընձեռվի թշնամուն: Երկրորդ, ինչն ավելի կարեւոր է, Թուրքիայի հետ միասնական զինված ուժերի վերաբերյալ պայմանագիր կնքելը:

Կարող է զարմանալի թվալ, թե ինչու պետք է վախենա Բաքվի բռնապետը, եթե նա, իր ասելով, վերջին 80 տարում կրել է աշխարհի ամենամեծ հաղթանակներից մեկը, որն իրենց, այսպես ասած, հայրենական պատերազմում հաղթանակ է տարել զավթիչների նկատմամբ՝ նրանց վռնդելով Ադրբեջանի տարածքից: Որին որպես հաղթանակած եւ ուժեղ նախագահ է ընդունել ԱՄՆ նախագահ Թրամփը, եւ որն անընդհատ սպառնում է, որ ամբողջությամբ կվերականգնի նաեւ ադրբեջանական պատմական հայրենիքը: Այդ ամենը, իհարկե, հեքիաթ է, եւ սխալ քայլ անելու դեպքում շարունակ փոփոխվող աշխարհում վերջինիս հաղթանակը հանգիստ կարող է վերածվել պարտության: Ու հենց այդ պատճառով նա չի համարձակվել շատ խորանալ հայաստանյան տարածքում՝ օգտագործելով Փաշինյանի վարչապետությամբ իրեն ընձեռված հիանալի հնարավորությունը: Ու որպեսզի իր վախը հանկարծ չվերածվի իրականության, նա ամեն ինչ անում է, որպեսզի վարչապետի պաշտոնը չկորցնի Փաշինյանը, այն անձը, որն իր նախկին քաղաքացիական կնոջ հետ գեներացրել է հայաստանյան թուլությունն ու դարձել այդ թուլության «պահեստապետն» ու պաշտպանողը: Իսկ Հակոբյան Աննայի առումով հիշենք 10 հազարից ավելի հայ դասալիքների մասին նրա ֆեյսբուքյան գրառումը:

**ՀԳ.** *Ինչ վերաբերում է Նախիջեւանի տարածքում իրանական անօդաչու թռչող սարքերի հայտնվելուն, դա հերքվել է Իրանի ԶՈՒ ԳՇ-ի կողմից: Եթե դա ճիշտ է, ապա, ենթադրաբար, դրա նպատակն Իրանի պարտության դեպքում հիմնավորում սարքելն է՝ ադրբեջանցիներով բնակեցված երկրի հյուսիսային ու արեւմտյան մասերը զավթելու համար:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am